



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Սփիւռքի խօսքը

«Սասնայ Ճռեր» խումբին կողմէ Երեւանի ոստիկանական կեդրոնատեղիի գրաւումը ու անոր յաջորդած ժողովրդային շարժումը կը շարունակէ մնալ հայութեան ու շարժումներու կեդրոնը՝ Հայաստանի եւ սփիւռքի տարածքին:

Այդ իրադարձութիւններու ընթացքին ու անկէ յետոյ յաճախ կը հանդիպինք գրութիւններու եւ ելոյթներու, որոնց հեղինակները քիրախ դարձնելով սփիւռքահայ աւանդական կուսակցութիւնները եւ կազմակերպութիւնները, կը մեղադրեն զանոնք լուծման իրադրութիւններու մէջ:

Նախ պէտք է ճշդել, որ երբ խօսքը կը վերաբերի կուսակցութիւններուն, առաջին օրէն սկսեալ ու դէպքերու զարգացումներու ընթացքին, կուսակցութիւնները համոզուեցան պաշտօնական բազմաթիւ յայտարարութիւններով, իսկ իրենց մամուլի օրկաններուն մէջ լոյս տեսան ու կը շարունակեն հրապարակուիլ յօդուածներ ու կարծիքներ:

Հնչող մեղադրանքները եթէ կը վերաբերին հաւաքական խօսքի ու կեցուածքի բացակայութեան, ապա այդ պարագային պէտք է ընդունիլ, որ սփիւռքահայ կազմակերպութիւնները ընդհանրապէս եւ Ամերիկահայ կազմակերպութիւնները մասնաւորապէս, կը գտնուին հաւաքական քայլերու դիմելու եւ Հայաստանի դիմագրաւած դժուարութիւններուն յստակ ծրագիրներով յազմեցուած լուծումներ առաջարկելու հրամայականին առջեւ:

Ախտաճանչումի, դատապարտումի, մեղադրանքներու պահը չէ այժմ: Այդ բոլորը կատարած ենք տարիներէ ի վեր, առանց մեծ արդիւնքներու հասնելու: Բոլորս ալ լաւ գիտենք հայաստանի մէջ տիրող վիճակը՝ բոլոր մակարդակներու վրայ: Կը դառնանք կլոր շրջագծի մը մէջ, ուրկէ դուրս գալու անկարողութեան առջեւ կը գտնուինք ազգովին:

Ժամանակն է որ, օգտագործենք ամերիկահայութեան կարողութիւնները եւ մասնագիտական ուժերը, ոչ միայն լուծումներ առաջարկելու, այլ նաեւ՝ այդ լուծումներուն հասնելու ձեւերու մասին գործնական ծրագիրներ մշակելու ուղիւնքով:

Հայաստանի շուրջ ընթացող միջազգային բազմաթիւ եւ արագ զարգացումներու լոյսին տակ, որոնք կը սպառնան նաեւ Արցախի ու Արցախահայութեան ճակատագրին, ներքին ճակատի ամրապնդումը խիստ անհրաժեշտութիւն է մեզի համար: Իսկ, ներքին ճակատի համախմբման մէջ դեր ունի կատարելիք նաեւ սփիւռքը:

Ժամանակը եկած է, որպէսզի սփիւռքը ըստ իր ազդեցիկ խօսքը: «ՄԱՍԻՍ»

Բալո Սահակեան.

«Ողջամիտ, իրաւացի եւ Համարժէք Փոխզիջումները Անհրաժեշտ են»

Ֆրանսայի խորհրդարանի էլեկտրոնային թերթին տրուած հարցազրոյցի մը ընթացքին, Լեոնային Ղարաբաղի նախագահ Բալո Սահակեան ըսած է, որ Ղարաբաղի հիմնախնդրի լուծման ուղղուած բանակցութիւններուն համար նոր փուլ կը բացուի, եթէ Ատրպէյճան յարգէ 1994 թուականի հրադադարի համաձայնագիրը, Լեոնային Ղարաբաղը դարձեալ միանայ բանակցութիւններուն եւ չաղթահարուին հոգեբանական արգելքները, որոնք արդիւնք են Ատրպէյճանի վրեժխնդիր քաղաքականութեան:

«Ատրպէյճանը պէտք է կարողանայ հրաժարուել զարաբաղցիների եւ հայերի հանդէպ իր ազատեաց քաղաքականութիւնից, իր անհեռանկար արկածախնդրութիւնից եւ յանձն առնի յարգելու միւս ժողովուրդների հիմնական ազատութիւններն ու իրաւունքները», - յայտնած է Սահակեան:

Ղարաբաղի նախագահը պարիլեան քառօրեայ պատերազմը որակած է հայերու հանդէպ Ատրպէյճանի հայտնեաց զաղափարախօսութեան եւ իշխանութիւններու բռնապետութեան արդիւնք:

Պատասխանելով փոխզիջում-



Լեոնային Ղարաբաղի նախագահ Բալո Սահակեան

ներու մասին հարցին, Լեոնային Ղարաբաղի նախագահն յայտնած է, որ որեւէ հակամարտութեան լուծում, յատկապէս երբ այդ այնքան բարդ է, որքան Լեոնային Ղարաբաղինը, կրնայ իրականացուիլ միայն փոխզիջումներու միջոցով:

«Ողջամիտ, իրաւացի եւ համարժէք փոխզիջումներն անհրաժեշտ են», - աւելցուցած է Սահակեան շարունակելով. «Մենք պատրաստ ենք անել փոխզիջում-

Շար.ը էջ 5

Արթուր Ալեքսանեան Հայաստանի Ապահովեց Ոսկի Մետալ



Արթուր Ալեքսանեան ոսկի մետալի տիրանալէն ետք

Ռիօ Տէ Ժաներոյի մէջ տեղի ունեցող Ողիմպիական խաղերու ընթացքին Կիւմրեցի ըմբիշ Արթուր Ալեքսանեան, Օգոստոս 16-ի երեկոյեան ոսկի մետալ նուաճելով յունահունիական ոճի ըմբշամարտի մրցաշարի 98 քկ. ծանրութեան մէջ, դարձաւ Հայաստանի անկախացումէն ասդին երկրորդ ոսկի մետալակիրը:

Մինչեւ այդ, Հայաստան ունեցած էր միայն մէկ Ողիմպիական ախոյեան՝ Արմէն Նազարեանը, որ 1996-ին Աթլանթայի մէջ ոսկի մետալ նուաճած էր յունահունիական ոճի ըմբշամարտի մրցաշարին մէջ, իսկ 4 տարի յետոյ նոյն յաջողութիւնը կրկնած էր, սակայն հանդէս գալով Պուլկարիոյ դըրձին տակ:

Ալեքսանեանի յաղթանակը ցնծութեան մեծ ալիք յառաջացուց Կիւմրիի մէջ, ուր կէս գիշերը անց ըլլալով հանդերձ, տեղի ունեցաւ հրավառութիւն:

Ալեքսանեանին մի քանի ժամ ետք, գերծանր կշիռի մէջ ծանրորդ Գոռ Մինասեան նուաճեց Հայաստանի չորրորդ մետալը: 22-ամեայ ծանրորդը երկրորդ տեղը գրաւեց +105 քկ.-ի մէջ, ուր հանդէս եկաւ նաեւ Հայաստանի միւս ներկայացուցիչը՝ Ռուբէն Ալեքսանեանը, որ բաւարարուեցաւ չորրորդ տեղով:

Ռիօ-2016-ին Հայաստան նուաճեց եւս 2 արծաթ մետալ: Ըմբիշ Միհրան Յարութիւնեան աւարտականի հասնելով, կողմնակալ մրցավարութեան պատճառով պարտուեցաւ աշխարհի 2014 թուականի ախոյեան, սերպ Դաւոր Շտեֆանեկի դէմ:

Մրցումը աւարտեցաւ 1-1 արդիւնքով, սակայն մրցավարը յաղթանակը շնորհեց Շտեֆանեկին, իսկ Միհրան Յարութիւնեան բաւարարուեցաւ արծաթ մետալով:

Ծանրամարտի Հայաստանի հաւաքականի անդամ 19-ամեայ Սիմոն Մարտիրոսեան Օգոստոս 15-ին տիրացաւ արծաթէ մետալի:

Շար.ը էջ 5

Ս.Գ.Հ.Կ.-ի Շնորհաւորական Այցը Վեր. Պերճ Գամպագեանին



ՍԳՀԿ պատուիրակութեան անդամները եւ Հայ Աւետարանական Համայնքի ներկայացուցիչները հանդիպումի ընթացքին

Հինգշաբթի, Օգոստոս 4-ին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արևմտեան Ամերիկայի վարիչ Մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը այցելեց Կլեմէնտիէի Հայ Աւետարանական Համայնքի կեդրոնատեղին: Սոյն պաշտօնական այցելութեան նպատակն էր շնորհաւորել Վերապատուելի Պերճ Գամպագեանը՝ Միացեալ Նահանգներու, Գանատայի եւ Հարավային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան հովիւ (Առաջնորդ) ընտր-

ուելուն առթիւ: Հնչակեան պատուիրակութիւնը ջերմօրէն ընդունուեցաւ Վեր. Պերճ Գամպագեանի եւ իր զխաւոր գործակիցներէն Վեր. Վաչէ Էքմէճեանի եւ Պրն. Լեւոն Ֆիլեանի կողմէ:

Ս.Գ.Հ.Կ. վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Գրիգոր Խոտանեան Կուսակցութեան շնորհաւորութիւնները յայտնեց Վեր. Պերճ Գամպագեանին, յաջողութիւն մաղթե-

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայիոյելով Իշխանափոխութիւն Չես Իրականացնի

ՎԱՅԱԳՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ՀՀ ոստիկանութեան պարեկապահակային ծառայութեան գնդի գրաւման շուրջ Երեւանում Յուլիսի 17-ից 31-ը տեղի ունեցածը, ինչպէս ցանկացած իրադարձութիւն, անհրաժեշտ է գնահատել արդիւնքներով: ՊՊՄ գունդը «Մասնա ծուծերի» կողմից գրաւելու պատմութեան արդիւնքում Հայաստանն ունեցաւ երկու գոհ, հարիւրից աւել վիրաւորներ, որոնց թւում 17 տարեկան մի պատանի մէկ աչքը կորցրեց, հարիւրից աւել քաղաքանտարիկներ, որոնց թւում են քաղաքական գործիչներ, քաղաքացիական ակտիւիստներ, նախկին ազատամարտիկներ եւ այլապէս շարունակ: Հայաստանի դեկաւա-րութիւնը պաշտօնանկ արեց իրաւապահ համակարգի երկրորդ օղակի դեկաւար կազմի մի քանի ներկայացուցիչներ, հերթական անգամ հայ հանրութիւնն արձանագրեց, որ Հայաստանի ներկայ իշխանութիւնները համար բարձրագոյն արժէքն իրենց պաշտօնները պահպանելն է, իսկ ՀՀ քաղաքացու կեանքն ու առողջութիւնը նրանց համար մանրադրամի արժէք անգամ չունի:

Հայաստանի հանրային գիտակցութեան մէջ ձեւաւորուած կարծրատիպ է դարձել այն միտքը, որ իշխանութեան դէմ ուղղուած ցանկացած գործողութիւն ողջունելի է: Ենթադրուում է, որ

այն թուլացնում է իշխանութիւններին՝ մօտեցնելով այդքան բաղձալի իշխանափոխութիւնը: Իսկ այն տարբերակը, որ իշխանութիւնների դէմ ուղղուած որոշ գործողութիւններ վերջիններիս համար կարող են ձեռնտու լինել, նոյնիսկ եթէ այն ազնիւ մղումներով թելադրուած լինի, քննարկման առարկայ չի էլ դառնում: Մարդիկ չեն ցանկանում հաւատալ, որ օր ու գիշեր, անդադար Սերժ Սարգսեանին հայհոյող, իր կեցուածքի համար պարբերաբար բռնութեան եւ բանտարկութեան

քական խօսք է հնչում՝ յստակ ծրագրով ու ապագայի տեսլականով, հրապարակում մարդկանց թիւն աճում է, իսկ առանց քաղաքական խօսքի հրապարակը անմիջապէս դատարկում է, եւ էական չէ, թէ բանախօսներն իշխանութիւնների հասցէին որքան կոշտ որակումներ կը հնչեցնեն:

Յաջորդ իրողութիւնը, որը հին ընդդիմադիրները չեն կարողանում ընկալել, այն է, որ ընտրութիւնների միջեւ ընկած ժամանակահատուածում արտահերթ ընտրութիւնների պահանջ-

Յերթական անգամ հայ հանրութիւնը արձանագրեց, որ Հայաստանի ներկայ իշխանութիւնների համար բարձրագոյն արժէքն իրենց պաշտօնները պահպանելն է, իսկ ՀՀ քաղաքացու կեանքն ու առողջութիւնը նրանց համար մանրադրամի արժէք անգամ չունի

ենթարկուող քաղաքական գործիչը կամ քաղաքացիական ակտիւիստն իր գործողութիւններով ակամայ սպասարկում է իշխանութիւնների շահերը: Սակայն ողջ դժբախտութիւնը հենց այն է, որ Հայաստանի ընդդիմադիր դաշտի խաղացողների մեծ մասն իրենց գործողութիւններով ակամայ յետաձգում են իշխանափոխութիւնը: Ինչպէս, բացառութեամբ: Երբ հարթակներից քաղա-

ջով բողոքի ցույցերն իրականում ձեռնառու են իշխանութիւններին: Այդ «շարժումները» յաջողութեամբ պսակուելու գրեթէ գրոյական հնարաւորութիւն ունեն: Իհարկէ, երբ ցույցերին 5 կամ 10 հազար մարդ է մասնակցում, այդ փաստը ինչ-որ տեղ իշխանութիւնների համար տահմանափակում է իշխանութեան շրջանում կուտակ-

ուած հակաիշխանական էներգիան, հասարակութեան ակտիւ անդամներին կրկին հրապարակութեան դողա են ստանում եւ այսպէս շարունակ: Նորանկախ Հայաստանում մինչ օրս չի եղել որեւէ համապետական ընտրութիւն, որի նախորդող շրջանը «արտահերթերով» համեմուած չլինի: Իհարկէ, քաղաքական գործիչները կարող են ասել, որ իշխանութիւններն ընտրութիւնները կեղծելով են իրենց դիրքը պահպանել, ինչպէս կարող են իրենք այդ փաստի հետ համակերպուել: Իրականում ամէն մի ընտրութիւն ունենում է իր ընդդիմադիր առաջնորդին կամ առաջատար քաղաքական ուժին, եթէ վերջիններս իրենց տրուած քուէն հենց ընտրական փուլում չեն կարողանում վերածել փաստացի իշխանութեան՝ հենց մասսաների ազդեցութեամբ, ապա աւելի ազնիւ կը լինի «պարտութիւնն» ընդունելը՝ պատրաստուելով յաջորդ ընտրութիւններին: Անհրաժեշտ է, որպէսզի մարդկանց մէջ կուտակուած հակաիշխանական էմոցիան ընտրական փուլում դրսեւորուի, այդ դէպքում արդէն որքան էլ իշխանութիւնները ջանան, չեն կարողանայ իրենց դիրքերը պահպանել: Ընտրութիւնների միջեւ ընկած ժամանակաշրջանի «գինադադարի» պայմաններում ընդդիմադիր քաղաքական ուժերի հնարաւորութիւնները՝ մարդկային ռեսուրսների տեսանկիւնից, իշխանութիւնների համար կը դառնան անկանխատեսելի: Այլ կերպ ասած՝ վաղուց ժամանակն է, որ Հայաստանի ընդդիմադիր քաղաքական ուժերը հետեւութիւն կատարեն նախորդ երկու տասնամեակի փորձից: Ի վերջոյ, չի կարելի անընդհատ գլխով հարուածել պատին, դրա համար հարկաւոր է յատուկ գործիքներ ունենալ:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Սերժ Սարգսեանը Յեռու է. Ե՞րբ կը Գայ Նրա Յերթը

ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՅԻ

Մոսկուայում ՌԴ նախագահ Փութինի հետ հանդիպումից յետոյ աշխատանքային այցով մեկնելով Պրագիլիա՝ Սերժ Սարգսեանն այնտեղ ամառային օլիմպիադային մասնակցող հայ մարզիկներին յորդորեց առաւել մեծ պատասխանատուութիւն ունենալ մրցելու թիւներում, քանի որ փոքր երկրները առաւել զգալուն են մարզական յաղթանակների հանդէպ, որովհետեւ դրանք ներկայացնում են պետութիւնն աշխարհում:

Մոսկուայից յետոյ Պրագիլիա այցն ու մարզիկներին ուղղուած յորդորը Սերժ Սարգսեանի յատկանշական քայլ էր, որով նա փորձում էր երեւի թէ ցոյց տալ, որ ինքն իր գործն արել է Մոսկուայում, եւ հերթը մարզիկներին է՝ Ռիոյում: Ընդ որում՝ Սարգսեանը Ռիո մեկնեց ոչ թէ արձակուրդային, այլ աշխատանքային այցով, սրանով էլ թերեւս ցոյց տալու համար, որ մարզիկների յաղթանակը նրա համար «ճակատագրական» հարց չէ, ինքը պետական գործով է Պրագիլիայում, պարզապէս չի զլանում նաեւ սատարել մարզիկներին:

Առայժմ, իհարկէ, Սերժ Սարգսեանի սատարումը մարզիկների համար ոչինչ է, մետալներ չկան: Բայց երեւի թէ նաեւ հենց դրա համար Սարգսեանը խուսափեց Ռիո այցելութիւնը անմիջականորէն միայն օլիմպիադային կապելուց, որպէսզի պատասխանատուութիւնը չվերցնի մարզիկների ելուցիները համար՝ թողնելով այն Գագրիկ Մառուկեանի վրայ:

Իր համար գլխաւոր խնդիրները Սարգսեանը երեւի թէ լուծել է մոսկովեան այցի ընթացքում,

որից յետոյ իրեն թոյլ տուեց Պրագիլիա «անբռնազբօս» այցելութեան: Պրագիլիա այցը Սերժ Սարգսեանի համար ոչ թէ մարզիկների, այլ «սեփական» յաղթանակի գին ունէր, եւ Սարգսեանն արեց հնարաւորը, որ այցը առաւելագոյնս քիչ պայմանաւորուի մարզիկների ելուցիներով, «սեփական» յաղթանակը ռիսկի չենթարկելու համար:

Դա նշանակում է, որ Մոսկուայում ըստ ամենայնի ապահովուել են որոշակի երկարաժամկետ երաշխիքներ: Սակայն դրանցում, իհարկէ, Սերժ Սարգսեանի անձնական վաստակը խիստ հարցական է կամ յարաբերական: Աւելի շուտ՝ Սարգսեանը Մոսկուայում համոզուել է, որ Հայաստանի շուրջ զարգացումներում չկան մօտալուտ վտանգներ: Իսկ դրանք ռուս-թուրքական, ռուս-ատրպէյճանա-իրանական զարգացումներն են եւ ռուս-արեւմտեան հակադրութեան գլոբալ համատեքստը:

Սերժ Սարգսեանն իրենից հասանելիք առաւելագոյնն արել է՝ չի գնացել ներքին որեւէ կտրուկ քայլի, որեւէ ուղղութեամբ: Այլ կերպ ասած՝ նա չի «ցցուել»: Այդ իմաստով էլ խորհրդանշական է, որ Մոսկուայից յետոյ նա ոչ թէ աշխատում է, օրինակ, Թբիլիսիի կամ Թեհրանի ուղղութեամբ, այլ

գնում է հեռու՝ Լատինական Ամերիկա, կարծես ինչ-որ մէկին երաշխիք տալով, որ կովկասում շարունակուելու է «չերեւալ»:

Այնպիսի տպւորութիւն է, որ Մոսկուայում նրան ասել են՝ «մի կողմ քաշուի», ու Սարգսեանը քաշուել է հեռու: Այդ տեսանկիւնից խիստ յատկանշական է, որ, օրինակ, 2008 թուականին էլ նոյն իրավիճակն էր, երբ հենց այս օրերին ծաւալում էր ռուս-վրացական պատերազմը: Այն ժամանակ էլ Սերժ Սարգսեանը հեռու էր՝ միգրացիոն Պեկինում, հետեւում էր օլիմպիական խաղերին, իսկ Հայաստանում ապրանքային ճգնաժամ էր հասունանում ռուս-վրացական ճանապարհի փակման հետեւանքով: Պատերազմի աւարտից յետոյ Սարգսեանն իջաւ ասպարէզ՝ Գիւլի հետ, Երեւանի Հրազդան մարզադաշտում: Բարեբախտաբար, այժմ պատերազմ չկայ, կան ընդամէնը վերլուծութիւններ ու թնամեայ վաղեմութեան պատերազմի կապակցութեամբ ու նաեւ եռամսեայ վաղեմութեան՝ ապրիլեան պատերազմի կապակցութեամբ: Բայց Սարգսեանը կրկին հեռու է, կամ՝ եւ Սարգսեանը կրկին հեռու է: Ինչպէ՞ս, ի՞նչ գործով եւ ո՞ւմ հետ է նա ասպարէզ իջնելու Օգոստոսից յետոյ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY



ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ոստիկանութիւնը Երեւանի Ցոյցերը Ցրուելու Դամար 74 Յատուկ Նռնակ Օգտագործած է



Երեւանի մէջ տեղի ունեցած ցոյցերէն մէկուն ընթացքին ոստիկանութիւնը նռնակներ կը նետէ ժողովուրդի վրայ

Պարեկապահակային ծառայութեան գունդի տարածքը գրաւած «Սասնայ ծռեր» զինուած խումբի աջակիցներուն ցոյցերը ցրելու նպատակով Յուլիս 20-ին՝ Խորենացի փողոցին եւ Յուլիս 29-ին՝ Սարի թաղին մէջ ոստիկանութիւնը 74 յատուկ նռնակ կիրառած են: «Իրազեկ Քաղաքացիների Միաւորում» կազմակերպութիւնը կը պնդէ, որ կիրառուած յատուկ միջոցները կրնային բեկորային վնասուածքներ յառաջացնել:

Ոստիկանութիւնը «Իրազեկ Քաղաքացիների Միաւորումին» յայտած է, որ նշուած օրերուն բողոքի շարժումները ցրելու ընթացքին կիրառած է «Զարիա 3», «Ֆակել Ս», «Տրոֆա», «Փլամիա Մ» տեսակներու նռնակներ, ինչպէս նաեւ «Սվիթլէ» տեսակի 19 հատ լուսաձայնային արկ:

Ուսումնասիրելով ոստիկանութեան այս տեղեկատուութիւնը եւ առողջապահութեան նախարարին յատուկ միջոցներու կիրառման մասին հրամանը, «Իրազեկ Քաղաքացիների Միաւորումի» ղեկավար Դանիէլ Իոաննիսեան կ'եզրակացնէ, որ ոստիկանութիւնը խախտած է նախարարին հրամանը՝ չպահպանելով սահմանուած

չափորոշիչները:

«Խախտել են անգամ այն նորմերը, որոնք կարող էին ոստիկանները հետեւել: Օրինակ, որ այս նռնակը պէտք է պայթի մարդուց առնւազն 2,5 մետր հեռաւորութեան վրայ, երբ մենք տեսնում էինք, որ շատ աւելի մօտիկ հեռաւորութիւնների վրայ էր պայթում», - «Ազատութեան» հետ ունեցած զրոյցի ընթացքին մեկնաբանեց Իոաննիսեան:

«Սասնայ ծռեր» զինուած խմբաւորման կողմէ ՀՀ ոստիկանութեան պարեկապահակային ծառայութեան գունդի տարածքը գրաւելէ ետք մեկնարկած բողոքի շարժման 4-րդ օրը՝ Յուլիս 20-ին, ոստիկաններու հետ բախման հետեւանքով հիւանդանոց տեղափոխուեցաւ 50 մարդ, որոնք, բժիշկներու գնահատմամբ, ստացած էին միջին եւ թեթեւ վնասուածքներ: Յուլիս 29-ի բախման հետեւանքով բուժարաններ տեղափոխուեցան աւելի քան 60 մարդ:

«Իրազեկ Քաղաքացիների Միաւորում» կազմակերպութեան ղեկավար Իոաննիսեան կը պնդէ, որ թէ՛ Յուլիսի 20-ին, եւ թէ՛ 29-ին ոստիկանութեան կողմէ յատուկ միջոցներու կիրառումը անօրինական էր:

«Ժառանգութիւնը» Դրաժարում է Մասնակցել ՏԻՄ Ընտրութիւններին

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը յայտարարութիւն է տարածել քաղաքատարկեալների եւ ժողովրդավարական գործընթացի վերաբերեալ:

«Գանի դեռ մեր կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը, մամլոյ քարտուղար Դաւիթ Սանասարեանը եւ քաղաքացիական հասարակութեան հետ կապերի պատասխանատու Յովսէփ Խուրշուդեանը, շինծու մեղադրանքներով մնում են մինչ դատական կալանքի տակ, «Ժառանգութիւն» կուսակցութիւնը՝ անտեսելով բոլոր վտանգները, մշտապէս հաւատարմով քաղաքական գործընթացում մասնակցութեան կարեւորութեանը. որոշում է կայացրել չմասնակցել երկրի ողջ տարածքում ընթացող ՏԻՄ ընտրութիւններին:

Մի կողմից, մեր ներկայացուցիչները օրինակելի քաղաքացիներ են՝ իրենց իրաւունքների իրականացմամբ եւ խաղաղ ժողովների մասնակցութեամբ, որոնք փաստօ-

րէն պատ էին կազմել ոստիկաններին եւ խաղաղ համաքաղաքացիներին միջեւ, իսկ միւս կողմից, նրանց նկատմամբ ձեռքարկութեան ժամանակ բռնութիւն եւ ճնշումներ են գործադրել ու այժմ մեր կուսակիցներին սպառնում է 4-10 տարի ազատազրկում:

Այստեղ չկայ ժողովրդավարութիւն, չկայ արդարութիւն, չկայ իրաւունքների ոչ մի գերակայութիւն: Եթէ բացարձակապէս անհրաժեշտ է «Ժառանգութիւնը», որը մշտապէս մասնակցել է քաղաքական գործընթացներին նոյնիսկ առաւել անարդար հանգամանքներում, կարող է ստիպուած սատարել ընտրական գործընթացներում ներգրաւուած այլ մասնակիցների, ովքեր դեռ պետութեան կողմից չեն ենթարկուել բռնութեան, հետեւաբար չեն համարուում խղճի բանտարկեալ Հայաստանի Հանրապետութիւնում:

Մեր տասնամեայ պայքարը ցաւօք սրա համար չէր», - ասուում է յայտարարութեան մէջ:

Ռուբէն Կարապետեան.-

«Հայաստանը Մօտեցել է Ազգային Անվտանգութեան Կարմիր Գծին»

Ապրիլեան պատերազմը յատկեցրեց մի կարեւոր հանգամանք՝ Հայաստանը մօտեցել է ազգային անվտանգութեան այն կարմիր գծին, որի հատումն անդառնալի է Հայաստանի եւ հայ ժողովրդի համար: Այս մասին Օգոստոսի 15-ին, լրագրողների հետ զրոյցում ասաց «Համախմբում» կուսակցութեան վարչութեան անդամ, նախկին ՀՀ արտակարգ եւ լրագոր դեսպան Ռուբէն Կարապետեանը:

«Ապրիլեան պատերազմը նաեւ բացայայտեց շատ խնդիրներ: Այսօր բոլոր պէտք է հետեւեալ հարցին պատասխանենք՝ ինչու մենք եկանք մօտեցանք այս կարմիր գծին եւ ինչ պէտք է անել այդ անդունդի մէջ չչլայտուելու համար: Սրա պատճառը ստեղծուած խորը անվստահութիւնն է տարբեր ոլորտներում: Ունենք զրոյցից ցածր վստահութեան մակարդակ իշխանութիւնների նկատմամբ, ունենք ներազգային անվստահութեան մթնոլորտ գրեթէ բոլոր մակարդակներում: Նման անվստահութեան մթնոլորտում դժուար է արտաքին եւ ներքին քաղաքականութեան մէջ յաջողութիւններ արձանագրել», - ասաց նա:

Ռուբէն Կարապետեանը նշեց, որ կարեւոր է նաեւ Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններում երկու պետութիւնների միջեւ

կապը, որը չկայ:

«Երբ Հայաստանն ու Ատրպէյճանը միասին չեն խօսում որեւէ մակարդակում՝ փակուղի ենք մտնում: Ոչ հասարակութեան, ոչ իշխանութեան շրջանում որեւէ ուղիղ կապ չկայ Ատրպէյճանի հետ: Պատերազմի ժամանակ, անգամ գինուորական հրամանատարութիւնը ուղիղ, անմիջական կապի մէջ են եղել: Երկու երկրները իրար կողքի պէտք է շարունակեն ապրել, բայց այն իրավիճակը, երբ ոչ մի մակարդակով չենք կարողանում այդ կապը պահպանել, կարող է հանգեցնել բացասական լուծման: Վերջին հաշուով դարաբաղեան հարցը լուծուելու է երկու ժողովուրդների փոխհամաձայնութեամբ: Այդ կապի չլինելն հասցրել է մի իրավիճակի, երբ հայ կամ ատրպէյճանցի երիտասարդները վախենում են մնալ նոյն սենեակում՝ իրար կ'սպանեն, կը ծեծեն», - ասաց նա:

Ռուբէն Կարապետեանը նշեց, որ ապրիլեան պատերազմից յետոյ Հայաստանի իշխանութիւնները որեւէ եզրայանգման չեկան, կրկին շարունակուած է այն քաղաքականութիւնը, որը կար մինչեւ քառօրեայ պատերազմը. «Մեր իշխանութիւնները վատթարագոյնի ընտրութեան առջեւ են կանգնած, կարծում եմ, որ իրական պատերազմի վտանգի առջեւ ենք կանգնած»:

Ալեք Ենիգոնշեան. «Այս Շարժումը Վերկուսակցական Շարժում է»

«Համակարգող խումբը վերակազմակերպուած է եւ անցած է իր գործառոյթներուն». «Կիրակնօրեայ վերլուծականի» հետ ունեցած զրոյցի ընթացքին յայտնեց «Հիմնադիր խորհրդարանի» անդամ, ցոյցերը համակարգող խումբի անդամ է Ալեք Ենիգոնշեան:



Ալեք Ենիգոնշեան հարցազրոյց կ'ունենայ «Ազատութիւն» հեռատեսիլի հետ

«Համակարգող խումբը գտնում է, որ այս շարժումը վերկուսակցական շարժում է, դա ՊՊԾ [պարեկապահակային ծառայութեան] գնդի տարածքից դուրս պահանջներին նկատմամբ հաւատարմութեան, այդ պահանջների միջոցով էր կոտորածը, բովանդակութիւնը կրելու յանձնառութիւնը ստանձնած մարդկանց, նաեւ այդ պահանջները իրականութիւն դարձնելու ուղղութեամբ աշխատանքներ տանելու յանձնառութիւնը ստանձնած մարդկանց խումբ է, որը ժողովրդի հետ միասին պէտք է այդ նպատակը փորձի իրականացնել:

Աւելի վաղ Ենիգոնշեան յայտարարած էր, որ համակարգող խումբի պահանջները կը մնան նոյնը՝ «Սերժ Սարգսեանի եւ վարչախմբի հեռացում, վստահութեան կառավարութեան ձեւաւորում»:

Ենիգոնշեանի խօսքով՝ այս

[նպատակների իրագործումը] կը պահանջէ վերկուսակցական մօտեցում: «Այդպէս եղել է եւ այդպէս էլ կայ: Հիմա դա չի նշանակում, որ կուսակցականներ կամ թէկուզ եւ կուսակցութիւններ չպէտք է, իրաւունք չունեն մասնակցութիւն բերել այդ պայքարին, այդ իրաւունքը ոչ ոքից չի զլացուած: Անհրաժեշտ է, որ լինի մի առանցք, որը հաւատարիմ է «Սասնայ ծռերի» առանցքային պահանջներին եւ, կրկնում եմ, կրողն է այդ գաղափարների, բայց դա չպէտք է լինի, այսպէս ասենք, քաղբերոյի դերակատարութեամբ ինչ-որ կառույց, որը վերեւից թելադրի, թէ ինչ պէտք է արուի եւ այլն: Դա պէտք է ապահովի միայն հաւատարմութիւն այդ գաղափարների», - յայտնեց համակարգող խումբի անդամը՝ նշելով, որ «Սասնայ ծռեր»-ով ու անոնց պահանջներով Հայաստանի մէջ նոր իրավիճակ ստեղծուած է:

ԼՈՒՐԵՐ

«Իզվեստիա». Ռուսիա Հայաստանին Եւ Ատրպէյճանին Նոյն Զէնքերը Կը Տրամադրէ

Ռուսական «Իզվեստիա» թերթը հրատարակած է «Ռուսաստանը Հայաստանին կը մատակարարէ նոյն զէնքը ինչ եւ Ատրպէյճանին» վերնագրով յօդուած մը, ուր նշուած է, որ երկու հարիւր միլիոն արժող վարկին դիմաց զէնքի մատակարարումը Հայաստանին արդէն իսկ սկսած է։ Սակայն պաշտօնական Մոսկուան ու Երեւանը ժամկէտներու ու մատակարարող զէնքի տեսակի մասին մանրամասներ չեն յայտնել։ Յօդուածագիրը կը նշէ, որ զէնքի մատակարարումէն բացի ռուսական կողմը պիտի զբաղուի նաեւ այդ զէնքը սպասարկող հայ մասնագետներու վերապատրաստմամբ։ Այս առումով թերթը գրուցած է է ՀՀ պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեանին հետ, որ հաստատած է այս տեղեկութիւնը։ Փորձագէտներու կարծիքով խօսքը ծանր սպառազինութեան մասին է, որուն առկայութիւնը զգալիօրէն կ'ուժեղացնէ հայկական բանակը։

«Իզվեստիան» նաեւ կը շեշտէ, որ թէեւ մատակարարումը սկսած է, այնուամենայնիւ, զինատեսակներու վերջնական ցուցակը դեռ համաձայնեցուած չէ։ Թէեւ պաշտօնական Երեւանը հրատարած է մանրամասնել, թէ յատկապէս ինչ զինատեսակներու մասին է խօսքը, ռուսական թերթը կը գրէ, որ Հայաստանը մտադիր էր Ռուսաստանէն գնել նախ եւ առջ «Սմերչ» եւ «Սոլնցեպոկ» համակարգերը, «ԻԳԼԱ- ԷՍ» հրթիռային համակարգը, արդիական «Ավտոբազա ԷՄ» համակարգը եւ «Տիգր» զրահամեքենաներ։

«Իզվեստիան» կը մեջբերէ նաեւ Օգոստոսի 10-ին Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահներու համատեղ ասուլիսի ժամանակ Վլադիմիր Փութինի յայտարարութիւնը։ Յիշեցնենք, որ Ռուսիոյ նախագահը ըսած էր՝ Հայաստանը Ռուսաստանի դաշնակիցն է ՀԱՊԿ-էն ներս, եւ որ Ռուսաստանը ունի պարտաւորութիւններ եւ միշտ կը կատարէ իր պարտաւորութիւնները։

Հայաստան Եւ Ռուսաստան Միացեալ Զօրախումբ Պիտի Ստեղծեն



Սէյրան Օհանեանի եւ Սէրկէյ Շոյկուի միջեւ Երեւանի մէջ կայացած բանակցութիւններու ընթացքին

Հայաստան եւ Ռուսաստան կը պատրաստուին միացեալ զօրախումբ ստեղծելու վերաբերեալ համաձայնագիր կնքել։ Այս մասին յայտարարութիւնը կատարած է Ռուսիոյ պաշտպանութեան փոխնախարար Անատոլի Անտոնով, Օգոստոս 16-ին Երեւանի մէջ կայացած երկու երկիրներու պաշտպանութեան նախարարներ Սէյրան Օհանեանի եւ Սէրկէյ Շոյկուի միջեւ կայացած բանակցութիւններէն ետք։

Ռուսական «ԹԱՍՍ» լրատուական գործակալութիւնը, որ ներկայացուցած է Անտոնովի խօսքերը, նաեւ յայտնած է, որ համատեղ զօրախումբ ստեղծելու մասին համաձայնագիրը կը գտնուի իր վերջին փուլին մէջ։

«Խօսքը արդէն գործող միացեալ զօրախումբի մասին է, որուն առընթեր քանակական եւ գործառնութեան որոշակի փոփոխութիւններ կը կատարուին, տինամիկ զարգացման գործընթաց է եւ տարիներ շարունակ իրականացուած է։ Այդ մասին է խօսքը», - «Ազատութիւն» ռատիոկայանին հետ զրոյցի ընթացքին պարզաբանած է Հայաստանի պաշտպանութեան նախարարի մամլոյ քարտուղար Արծրուն Յովհաննիսեան։

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան տրամադրած տեղեկութեան համաձայն, դեռ 2000-ի Սեպտեմբերին Սոչիի մէջ Հայաստանի ու Ռուսաստանի միջեւ կնքուած է զօրքերու համատեղ կիրառման մասին համաձայնագրի, որու հիման վրա ալ ստեղծուած է զօրքերու միացեալ խմբաւորումը։

Ըստ փաստաթուղթին, խմբաւորման նպատակն է՝ ընդհանուր հրամանատարութեան ներքեւ լուծել Հայաստանի ու Ռուսաստանի համատեղ պաշտպանութեան

խնդիրները։ Խմբաւորումը բաղկացած է Հայաստանի եւ Ռուսաստանի զինուած ուժերու զօրամասներէն, տեղակայուած է Հայաստանի մէջ, հրամանատարն է հայկական զինուած ուժերու ներկայացուցիչ գեներալ-մայոր Անդրանիկ Մակարեանը, որ նախագահ Սարգսեանի հրամանագրով անցեալ ամիս նշանակուած էր այդ պաշտոնին։

Նշենք, որ Սէյրան Օհանեանի ու Սերկէյ Շոյկուի գլխաւորած պատուիրակութիւնները հանդիպեցան Երեւանի մօտ գտնուող եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցութեան նախկին առաջնորդ Գագիկ Ծառուկեանին պատկանող «Մուլթի Կրանդ» հիւրանոցին մէջ։

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան փոխանցմամբ, հանդիպման ընթացքին քննարկուած են միջազգային եւ տարածաշրջանային անվտանգութեան ապահովման, երկկողմ ռազմական համագործակցութեան հարցեր, սակայն որեւէ խօսք չկայ դարաբաղեան հակամարտութեան կամ այն մասին, որ Ատպէյճանը պարբերաբար կը գնդակոծէ ՀԱՊԿ անդամ Հայաստանի խաղաղ բնակավայրերը։

Նշենք, որ Ռուսիոյ պաշտպանութեան նախարարը Երեւան հասած էր մասնակցելու «Մուլթի Կրանդ» հիւրանոցին մէջ այս առաւօտ մեկնարկած ՀԱՊԿ երկրներու պաշտպանութեան նախարարներու խորհուրդի նիստին։ Դաշինքի ռազմական գերատեսչութիւններու ղեկավարները քառօրեայ պատերազմէն յետոյ առաջին անգամն է, որ կը հաւաքուէին։ Կը նշուի նաեւ, որ Հայաստանի անվտանգութեան առնչուող սպառնալիքներուն մասին որեւէ հրատարակային անդրադարձ չէ եղած։

«Հայաստանին Դուրս Եւ Մղում Տարածաշրջանային Բոլոր Նախագծերից»

Հայաստանին ասես դուրս են մղում տարածաշրջանային իրադարձութիւններից եւ նախագծերից։ Այդ մասին Օգոստոսի 15-ի մամուլի ասուլիսին յայտնել է տնտեսագէտ Վարդան Բոստանջեանը։

Նրա խօսքով, արժէ ուշադրութիւն դարձնել ոչ թէ Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահներ Սերժ Սարգսեանի եւ Վլադիմիր Պութինի հանդիպմանը, այլ ռուսաստանեան նախագահի հանդիպումներին Ատրպէյճանի եւ Թուրքիայի ղեկավարների հետ։ «Ակնյայտ է, որ քաղաքական մեծ շահերի բախում է տեղի ունենում։ Ըստ էութեան, ներկայումս տարածաշրջանում ստեղծուած իրավիճակը անբարենպաստ է Հայաստանի համար», - ընդգծել է Բոստանջեանը։

Անդրադառնալով Հայաստանի ներկայիս տնտեսական իրավիճակին, տնտեսագէտն ընդգծել է, որ երկրի կառավարման համակարգում արմատական փոփոխութիւններ են անհրաժեշտ։ «Ոչ



Տնտեսագէտ Վարդան Բոստանջեան

թէ կոսմետիկ, այլ՝ արմատական։ Հոգեբանական գործօնը եւս դեր է խաղում։ Ամբողջ Հայաստանում հոգեբանական անկում է տիրում», - յաւելել է Վարդան Բոստանջեանը։

«Ռուս-Թուրքական Մերձեցումը Կարող Է Նուազեցնել Դեպի Ռուսաստան Հայկական Ապրանքների Արտահանումը».- Տնտեսագէտ

Հայաստանն այս պահին տնտեսական զարգացման լուրջ հեռանկարներ չի կարող ունենալ՝ հաշուի առնելով մեր երկրի արտադրական հնարաւորութիւնները, որոնք սահմանափակուած են գիւղատնտեսութեամբ, եւ Ռուսաստանի տնտեսական վատ վիճակը։ Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց տնտեսական գիտութիւնների դոկտոր Կարէն Ադոնցը՝ նշելով, որ դէպի Ռուսաստան արտահանման աւանդական ոլորտներն էլ այժմ վտանգուած են՝ հաշուի առնելով ռուս-թուրքական մերձեցման գործընթացը։

«Ընդհանուր առմամբ պահպանել որոշ ոլորտներ՝ աւանդական խմիչքների կամ վերամշակող արտադրանքի, հնարաւոր է, բայց տատանողական հնարաւորութիւններով, դա կախուած է Ռուսաստանի շուկայի վիճակից։ Բայց այսօր ռուս-թուրքական մերձեցման գործընթացը կարող է փակել նաեւ այդ հնարաւորութիւնները։ Թուրքիայի առջեւ կարող են նորից բացուել շուկաները, գիւղատնտեսական ապրանքի, վերամշակուող արտադրանքի, տեքստիլի առումով դա կը սահմանափակի Հայաստանի հնարաւորութիւնները», - ասաց տնտեսագէտը։

Կարէն Ադոնցի կարծիքով՝ ստեղծուած իրավիճակը Հայաստանի համար բաւական վտանգաւոր է, քանի որ Ռուսաստանը փորձելու է իր լուրջ աշխարհաքաղաքական պրոբլեմները լուծել Ատրպէյճանի եւ Թուրքիայի հետ յարաբերութիւններն ամրապնդելով։

Հայաստանի Եւ Իրանի Միջեւ Առանց Վիզայի Ռեժիմը Ուժի Մէջ

Հայաստանի Հանրապետութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան կառավարութիւններու միջեւ 2016 թուականի Յունիս 5-ին ստորագրուած քաղաքացիներու առանց մուտքի արտոնագրի այցելութիւններու մասին փոխըմբռնման յուշագիրը ուժի մէջ է։ Այդ մասին կը տեղեկացնէ ՀՀ արտաքին գործերու նախարարութիւնը։

Փոխըմբռնման յուշագիրով Հայաստանի եւ Իրանի քաղաքացիները իրար տարածք մուտք գործելու, տարանցիկ անցնելու եւ գտնուելու համար կ'ազատուին մուտքի արտոնագիր արտոնագիրը ապահովելու պահանջէն՝ 90 (իննսուն) օր չգերազանցող ժամկէտով՝ 180 (հարիւր ութսուն) օրուան ընթացքին։

«ՍԹՐԱԹՖՈՐ»-Ը ԶԻ ԲԱՅԱՌԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀԱԿԱԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐ ԲՈՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի մէջ պատանդա- ուղեւորական ճգնաժամն աւարտեցաւ, բայց խնդիրները մնացին, կը գրեն վերլուծական կեդրոնի փորձագէտ- ները: Երկշաբաթեայ ճգնաժամի հանգուցալուծումէն ետք նախա- գահ Սերժ Սարգսեան Օգոստոս 1- ին խոստացաւ ազգային համաձայ- նութեան կառավարութիւնն ձե- ւաւորել, յոյս ունենալով մեղմել բնակչութեան դժգոհութիւնը: Սա- կայն, հակառակ հանգամանքին, որ պատանդաւորութեան հետ կապուած ճգնաժամն աւարտեցաւ, իշխա- նութիւններու դէմ բողոքի շար- փումները կը շարունակուին՝ ընդգ- ծելով խնդիրի լայն քաղաքական բնոյթը:

Երկրէն ներս տիրող անփո- փոխ դժգոհութիւնը եւ Լեւոնային Ղարաբաղի պատճառով Ատայէյճա- նի հետ հակամարտութիւնը պիտի շարունակեն ստուերի տակ առնել Հայաստանի կառավարութեան ապագան, անկախ այն բանէն, որոնք կը ղեկավարեն կառավարութիւնը, քանի որ ներքին եւ արտաքին քաղաքական ու այլ խնդիրներ հնարք գտնելու քիչ տեղ կը ձգեն Հայաստանի իշխանութիւններուն, կը յայտնեն «Սթրատֆոր»-ի վեր- լուծաբանները:

Արձանագրելով, որ երկրի սահ- մաններէն ներս եւ դուրսը անկա- նոն բռնկումներով յագեցած վեր- ջին մի քանի ամիսները դժուար էին Հայաստանի համար, փորձա- գէտները կը նշեն, որ Ապրիլին Լեւոնային Ղարաբաղի մէջ ռազմա- կան լարուածութեան բռնկումը անակնկալի բերաւ Երեւանը, որուն հետեւանքով, Հայաստանի կողմէն աջակցութիւն ստացող Ղարաբաղի զօրքերը ոչ մեծ, սակայն, նշանա- կալի տարած քայլին կորուստ ունե- ցան:

«Սթրատֆոր»-ը նաեւ կը նշէ, որ այդ օրերուն 1994 թուականի հրադադարէն ի վեր Հայաստանն ու Ատայէյճանը ամենամեծ մարդ- կային կորուստներն ունեցան: Հա- կառակ անոր, որ ռազմական գոր- ծողութիւններու բռնկումը չորս օր տեւեց, այդ բաւարար էր՝ ցոյց տալու համար, որ ռազմավարական դաշնակից Ռուսաստանը չի ցան-

կար պաշտպանել Հայաստանը: Փո- խարհը՝ Մոսկուան Երեւանին ստի- պեց վերականգնել բանակցութիւն- ներն Ատայէյճանի հետ: Հայաս- տանի մէջ շատերը կը կարծէին, որ այդ բախումը եւ ատոր յաջորդած բանակցութիւնները մեծ անյաջո- ղութիւններ են, քանի որ Հայաս- տանը կը գերադասէր հաստատ- ուած սահմանի պահպանումը Լեո- նային Ղարաբաղի մէջ, կը գրեն վերլուծական կեդրոնի փորձագէտ- ները:

Ըստ անոնց, իսկութեան մէջ այս հիասթափութիւնն էր Յուլիս 17-ին «Սասնայ ծուր» անունով ներկայացած զինուած խումբի կողմէն Երեւանի մէջ ոստիկանա- կան գունդի տարածքը գրաւելու հիմնական դրդապատճառներէն մէ- կը: Այդ խումբը, որի մէջ բազմա- թիւ էին ղարաբաղեան պատերազ- մի վետերանները, ստացաւ Հայաս- տանի հասարակութեան «զգացա- կան աջակցութիւնը»:

Հազարաւոր մարդիկ բողոքի դուրս եկան իշխանութիւններուն դէմ, գոր ստիպեց բանակցիլ խում- բի հետ: Այդ ալ, ի վերջոյ հանգե- ցուց Յուլիս 31-ին խումբի ան- դամների յանձնուիլը: Այնուհան- դերձ, հակառակ այդ ճգնաժամը հանգուցալուծուեցաւ, Սարգսեանի կառավարութեան վրայ ճնշումնե- րը կը շարունակուին, կը նշեն «Սթրատֆոր»-ի վերլուծաբաններն ու կը շարունակեն, այդ հանրահա- ւանքները շարունակութիւնն են կառավարութեան դէմ այն լայն բողոքի շարժումներուն, որոնք տե- ղի ունեցած են անցած մի քանի տարիներու ընթացքին: Նախա- գահն ինքը այդ ընդունեց Օգոստոս 1-ին հանրութեան ներկայացու- ցիչներուն հետ ունեցած հանդիպ- ման ժամանակ ըսելով՝ Հայաստա- նի իշխանութիւններն անթերի չեն, եւ երկրի դիմաց ծառայած են շարք մը բարդ խնդիրներ:

Այդ խնդիրները լուծելու հա- մար Սարգսեան առաջարկեց ձեւա- ւորել ազգային համաձայնութեան կառավարութիւն, գոր հարցերը կը լուծէ լայն համաձայնութեան պայ- մաններու մէջ: Նախագահը աւել- ցուց, թէ. «Նման կառավարու-

թեան ձեւաւորումը տեղի կ'ունե- նայ մի քանի ամսուան ընթաց- քին», - կը հաղորդէ «Սթրատֆ- ֆոր»-ը ու կը շարունակէ՝ նոր կառավարութեան ձեւաւորումը տե- ղի պիտի ունենայ բարեփոխուած Սահմանադրութեան հիման վրայ: «Այդ բարեփոխումով Հայաստանը կ'իսնախազահական կառավարման համակարգէն կ'անցնի խորհրդա- րանական համակարգի, այդ գոր- ծընթացը սկսած է 2015 թուականի տեղի ունեցած հանրաքուէով եւ կ'աւարտի 2018-ին»:

Վերլուծաբանները կը նկա- տեն՝ թէեւ տեսականօրէն այդ փո- փոխութեամբ օրէնսդիր մարմինն աւելի մեծ իշխանութիւն պիտի ունենայ, քան նախագահը, շատ քաղաքացիներ կը կասկածին, որ այդ Սերժ Սարգսեանի համար ճանապարհ է՝ անուղղակի միջոց- ներով պահպանելու իր իշխանու- թիւնը, քանի որ նախագահի պաշ- տօնին համար ան երրորդ անգամ արդէն չի կրնար թեկնածու առա- ջադրուիլ:

Լեւոնային Ղարաբաղի մէջ իրավիճակի բռնկման, պատանդա- ուղեւորական ճգնաժամին եւ վերջին բողոքի շարժումներուն իբրեւ ար-



դիւնք հանրութիւնը չի ցանակար, որ Սարգսեանի իշխանութիւնը շա- րունակուի: Կեդրոնի փորձագէտ- ները հաւանական կը նկատեն անոր կառավարութեան դէմ նոր բողոք- ները, չբացառելով նաեւ նոր յար- ձակումներու կամ բռնութիւննե- րու հնարաւորութիւնը:

Ազգային համաձայնութեան կառավարութեան ձեւաւորման փոր- ձը կրնայ Սարգսեանին որոշ ժա- մանակ ընձեռել՝ մարտավարու- թիւնը փոխելու համար, սակայն, անոր ջանքերու անկեղծութիւնը պիտի ստուգուի յոռետես քաղա- քացիներու ուշադիր գննութեամբ: Նոյնիսկ, եթէ Սարգսեանի վարչա- կազմը կասեցնէ աղէտը, Հայաստա- նի աշխարհա քաղաքական երկա- րատեւ սահմանափակումները կը շարունակեն լուրջ մարտահրա- ւէյններ մնալ կառավարութեան համար: Խօսքը յատկապէս Ատր- պէյճանի հետ չմարող հակամար- տութեան մասին է, կ'ամփոփէ «Սթրատֆոր» վերլուծական կեդ- րոնը:

«Ողջամիտ, Իրաւացի Եւ Համարժէք Փոխզիջումները Անհրաժեշտ Են»

Շարունակուած էջ 1-էն

ներ, եթէ դրանք չեն խաթարում մեր երկրի անվտանգութիւնը, եթէ դրանք չեն հանդիսանում պատեհ առիթներ մեր հակառակորդի հա- մար մեր վրայ նոր յարձակումներ գործելու»:

Անդրադառնալով միջազգա- յին հանրութեան կողմէ Լեւոնային Ղարաբաղի ճանաչման հարցին եւ այդ ուղղութեամբ արձանագրած յաջողութիւններուն, Բակօ Սա- հակեան վստահութիւն յայտնած է, որ Ղարաբաղի ճանաչումը մօտ ապագային պիտի շարունակուի աւելի մեծ յաջողութեամբ, իր դրական հետեւանքներն ունենա-

լով Հարաւային Կովկասի կայու- նութեան վրայ:

«Օրինական է արդեօք աշ- խարհագրական մի տարածքում խմբուած փոքրամասնութեան ինքնորոշման պահանջը», հար- ցումին Բակօ Սահակեան պա- տասխանած է. «Ինքնորոշման պահանջի իրաւունք ունին բոլոր ժողովուրդները, դա միջազգա- յին իրաւունքի հիմնական սկզբունքներից մէկն է: Բայց այդ իրաւունքը դառնում է հրամայա- կան մի պարտականութիւն այն ժամանակ, երբ պետութիւնը, որին միացուած է նա, չունի մի այլ ցանկութիւն, քան այդ ժողովր- դին ոչնչացնելը»:

Արթուր Ալեքսանեան Հայաստանի Ապահովեց Ոսկի Մետալ



Շարունակուած էջ 1-էն

105 քկ. ծանրութեան մէջ հանդէս գալով, Մարտիրոսեան պո- կում ձեւով բարձրացուց 190 քկ., իսկ հրում ձեւի ընթացքին ան կարողացաւ բարձրացնել 227 քկ.

եւ ընդհանուր՝ 417 քկ. արդիւնքով ան ապահովեց արծաթէ մետալը Այս ծանրութեան մէջ ոսկի մետալին տիրացաւ Ուզպէքիստա- նի ներկայացուցիչ Ռուսլան Նու- րուտիևով, որ երկու ձեւերով բարձ- րացուց 431 քկ.

Ս.Դ.Հ.Կ.-Ի Շնորհաւորական Այցը Վեր. Պերճ Ծամպագեանին

Շարունակուած էջ 1-էն

լով իր ստանձնած նոր եւ պատաս- խանատու առաքելութեան՝ ազ- գանուէր ու հոգեւոր ծառայու- թեանց մարզին մէջ:

Սոյն հանդիպման ընթացքին Պր. Լեւոն Ֆիլեան շահեկան տեղե- կութիւններ տուաւ Հայ Աւետա- րանակ Եկեղեցիներու Միութեան Միջին Արեւելքի երկիրներուն եւ արտասահմանի հայ գաղութներու մէջ ծաւալուն գործունէութեան մասին: Առաւել հետաքրքրական էին իր տեղեկութիւնները Հայաս- տանի շատ մը շրջաններուն մէջ բացուած Հայ Աւետ. Միութեան կողմէ նոր եկեղեցիներու, դպրոց- ներու, ընկերային եւ մարդասիրա- կան ծառայութիւններու, ինչպէս նաեւ ամառանային կազմակերպման կա- յաններու (ճամբար) մասին: Յատ- կանշական էր Երեւանի արուար- ձաններէն «Պէնկլատէշ» թաղամ- պին մէջ կառուցուած արդիական միջնակարգ վարժարան մասին

տեղեկութիւնները, ուր դպրոցա- կաններուն կը ջամբուի ոչ միայն բարձր մակարդակի ուսում, այլեւ կարիքաւորներուն կը հայթայթ- ուի սնունդ: Իսկ աշխատանքի մէջ եղող ծնողներու զաւակներուն կը տրուի արտահերթ հոգածութիւն մինչեւ երեկոցեան առաջին ժամե- րը:

Հանդիպման ընթացքին խորհրդակցութեանց նիւթ դար- ձան նաեւ Հայաստանի եւ Արցախի ժողովուրդին դիմագրաւած իրա- վիճակն ու արտագաղթը, ինչպէս նաեւ Լիբանանի ու Սուրիոյ հայութեան, յատկապէս հայկա- հայութեան վիճակուած դառն ճա- կատագիրը:

Իրերու ներկայ դրութեան ներքեւ շեշտը դրուեցաւ հայու- թեան բոլոր հատուածներու միաս- նութեան, համատեղ ու ներդաշնակ համագործակցութեան վրայ, ի շահ Հայրենիքի եւ արտերկրի մեր ազ- գի կենսական ծրագիրներու իրա- գործման:

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԻՐԱՆԱՏԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՆՇԵԼՈՒ Է ԻՐ ԴԻՄՆԱԴՐՄԱՆ 60-ԱՄԵԱԿԸ

Լոս Անճելոսի Իրանաճայ Միութեան Հոգաբարձութիւնը, յանուն իր 1500 անդամ-անդամուհիների որոշել է հետեւեալ չորս շքեղ միջոցառումներով նշել իր հիմնադրման 60-ամեակը.

1) Օգոստոսի 27-ին, ծաղկերոյթ Հանդիսութեամբ մը տօնակատարել Միութեան հիմնադրման 60-ամեակն ու Մեծ Բարերարներ՝ Լուդովիկա եւ Յակոբ Այնթապլեանների ամուսնութեան 50-րդ տարեդարձը: Այս առիթով՝

– Լոս Անճելոսի Իրանաճայ Միութեան Կենտրոնը (The Headquarters of ASLA) կոչել Լուդովիկա եւ Յակոբ Այնթապլեան Կենտրոն:

– Գրադարանն ու խորհրդաժողովների սենեակը (Library & Conference Room) կոչել՝ Օդրի եւ Վահան Կրէկերի անուամբ:

– Պատույ Հիւրերի եւ Ընթերցանութեան սենեակը (The VIP and Reading Room) կոչել՝ Գայուստ եւ Բաբախանեան ընտանիքի անունով:

– Գլխավոր նախարար (Main Lobby) կոչել Սինան Սինանեանի անուամբ:

2) Սեպտեմբեր 24-ին, Լոս Անճելոսի Իրանաճայ Միութիւնը հանդիսաւոր կերպով պիտի նշէ Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 25-ամեակը:

3) Հոկտեմբեր 2-ին տեղի է ունենալու Մեծ Համերգ, որի ընթացքում հանդէս է գալու միջազգայնօրէն ճանաչուած ջութակահար Սերգէյ Նաչատրեանը, ընկերակցութեամբ՝ Լոս Անճելոսի Սինֆոնիք նուագախումբի (Los Angeles Symphony Orchestra): Համերգը, որը նուիրուած է Հայաստանի Անկախութեան 25 եւ Լոս Անճելոսի Իրանաճայ Միութեան 60- ամեակներին, տեղի է ունենալու Փասադինայի Ambassador Auditorium-ի մէջ:



4) Լոս Անճելոսի Իրանաճայ Միութիւնը, Նոյեմբեր 19-ին, իր տարեկան ճաշկերոյթ պարահանդէսի ընթացքում պիտի պատէ անցեալի եւ ներկայի իր նախագահները:

Լոս Անճելոսի Իրանաճայ Միութիւնը, որը ոչ-շահաբեր կազմակերպութիւն է, հիմնուել է 1956 թուականին: Իր նպատակն է՝ պահպանել եւ զարգացնել ամերիկեան եւ հայկական մշակութային ականջոյթները եւ քաջալերել լաքադաքացիութիւնն ու յարգանքը՝ կառավարութեան նկատմամբ:

Որպէս անկախ հաստատութիւն, Լոս Անճելոսի Իրանաճայ Միութիւնը չի մասնակցիր որեւէ քաղաքական կամ կրօնական գործունէութեան:

ՎԱԽՃԱՆԱԾ Է ՈՒԱՇԻՆԹՈՆԻ ՊԱՏՈՒԱԿԱԼ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱԼՅՈՒՄԱՆ ԱՐԳ ՔՅՆՅ. ԳԱԼԱՅՃԵԱՆ

Վախճանած է Ուաշինկթընի պատուակալ հովիւ Ս. Վրթանէս Աւագ. Քհնյ. Գալաչաճեան: Տէր հայրը, որ հանգստեան կոչուելէ ետք, որպէս պատուակալ հոգեւոր հովիւ կը ծառայէր Ուաշինկթընի մէջ, ծնած էր Հալէպ 1939-ին: 1953- 1958 Տարիներուն ուսանած է Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի դպրեվանքէն ներս: Աւելի ուշ ան կը փոխադրուի Երուսաղէմ եւ 7 Փետրուար 1960-ին կուսակրօն քահանայ ձեռնադրուելով կը դառնայ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ուխտեալ կրօնաւորներէն մին:



Մինչեւ 1963 թուական ան տարբեր պաշտօններ կը վարէ Երուսաղէմի Պատրիարքական աթոռին եւ կը դասաւանդէ հայոց լեզուի եւ գրականութեան դասեր տեղի Թարգմանչաց վարժարանէն ներս: 1963-ին կարճ ժամանակով մը, որպէս հոգեւոր հովիւ կը ծառայէ իր ծննդավայր Հալէպի մէջ: Տարի մը անց՝ 1964-ին կը մեկնի Միացեալ Նահանգներ, ուր հովուական պաշտօն կը կատարէ Իլանոյի Սուրբ Գէորգ, Նիւ ձըրզիի Սուրբ Խաչ եւ Սուրբ Ստեփանոս եւ Ուաշինկթընի՝ Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցիներուն մէջ: 1967-ին ձեռամբ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու արեւելեան թեմի օրուան առաջնորդ՝ Ս. Թորոմ Արք. Մանուկեանին կը ստանայ վարդապետական աստիճան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Երջանկայիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Կաթողիկոսի բարձր հրամանով:

նաև իրաւուք կը ստանայ ամուսնացեալ քահանայի կարգ ստանալու եւ նոյն տարին ընտանիք կը կազմէ:

Պարկեշտ եւ նուիրեալ քրիստոնէական բարձր արժէքներով ապրող Տէր Հայրն ու երեցկին՝ Անահիտը կը բախտաւորուին երեք զաւակներով: Քահանայական առաքելութիւնէն բացի Ս. Վրթանէս Աւագ Քահանայ, որպէս կրօնական գործիչ կը տանի համայնքային գործունէութիւն եւ կը կազմակերպէ քրիստոնէական եկեղեցասիրաց եւ կիրակնօրեայ վարժարանի տարբեր աշխատանքներ:

Տարբեր առիթներով, առ ի գնահատանք իր տարած նուիրական առաքելութեան կը ստանայ պատուոյ զիւրեր, ինչպէս նաեւ լանջախաչ կրելու իրաւունք: Յիշեցնենք, թէ վախճանեալ տէր հայրը աւագ եղբայրն է Նիւ Եորքեանկ երկու նուիրեալ ազգայիններ՝ Գէորգ եւ Վազգէն Գալաչաճեաններուն:

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԺԱԳ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ 80 ԵՒ 100 ԱՄԵԱԿՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Սփիւռքահայ մեծանուն բանաստեղծ, մշակոյթի աննկուն գործիչ Ժագ Յակոբեանի ծննդեան դարադարձը ու իր բեղուն վաստակի 80-ամեակը հանդիսաւորապէս պիտի նշուի Կիրակի, Հոկտ. 30, 2016. Կլենտէյլի Փրիսպիթիւրիան եկեղեցւոյ մէջ. Հասցէ 125 S. Louise Ave.: Երեկոյեան ժամը 6-ին:

Կազմակերպութեամբ Մաշտոց Գոլէճի, բարձր հովանաւորութեամբ ՀՀ Լ.Ա. հիւպատոսարանի եւ հովանաւորութեամբ Արեւմտեան Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ ազգային առաջնորդարան, Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հայոց առաջնորդարան, Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան:

Կազմակերպչական յանձնարումբին մաս կը կազմեն Ամերիկայի Հայ Աւետարանչական ընկերակցութիւն, Համազգային Կրթական եւ Մշակութային Միութիւն, Հ.Բ.Լ.Մ., Իրանաճայ Միութիւն, Գալիֆորնիայի Հայ Գրողներու Միութիւն, Իրաքահայ Ընտանեկան Ընկերակցութիւն, Նոր Սերունդ Մշակութային Միութիւն, Թէքէեան Մշակութային Միութիւն, Պոլսահայ Միութիւն:

Ժագ Յակոբեան հեղինակ է 35



հատորներու. ան նաեւ ծառայած է որպէս հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ Լիբանանի Կենաց Երկրորդական վարժարանի մէջ եւ Փասատինայի Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ վարժարանին մէջ:

Բովանդակալից յայտագիրը պիտի պարունակէ երկու բանաստեղծիւն, ողջոյնի խօսքեր, վկայութիւններ, նուագներ եւ ասմունք: Նաեւ պիտի ցուցադրուի բանաստեղծին կեանքը ներկայացնող տեսաերիզ մը:

Հանդիսութեան մուտքը ազատ է:

«ԱՐԱՐԱՏ-ԷՍՔԻՃԵԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՍԷՉ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՏԱԼՆԵՐՈՒ

«Արարատ-էսքիճեան» թանգարանի եւ Հայկական գորգի ընկերակցութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 20 Օգոստոսին, տեղի պիտի ունենայ հայկական գծազրուած եւ եկեղեցական կտաւներու նուիրուած դասախօսութիւն մը, ուր տեղ պիտի գտնէ նաեւ լրեսանկարներու ներկայացում:

Արուեստի այս իւրայատուկ ոլորտի մասնագէտ Պերճ Աշճեան պիտի խօսի ընդհանրապէս Հնդկաստանի մէջ տարածուած այս կտաւներուն մասին, որոնց հայկական տարբերակները իրենց մէջ կը պարունակեն Հայց. եկեղեցւոյ, ինչպէս նաեւ հայ իշխաններու եւ հարուստ առեւտրականներու ընտանիքներու



պատմութեանց տուեալներ: Ձեռնարկը տեղի պիտի ունենայ «Արարատ տան» «Շին» մատուրին մէջ:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND logo and 'Save Support Sustain' text with contact information for Glendale, CA.

Advertisement for '2016-Ի ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ' featuring book covers and contact details for Abril Bookstore and Berj Bookstore.

ԵՐԵՒԱՆ ԵՒ ... ՊԵՅՐՈՒԹ

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ

Յուլիս 17-ին սկսեալ՝ երեւանեան վերջին անցուդարձի ֆոնին վրայ, մեր հայրենաբնակ կարգ մը ազգակիցներէն քանիցս լսեցինք թէ «Պէյրութ մի, սարքէք մեր երկիրը»: Երկուշաբթի օր, Պէյրութի կողքին յայտնուեցաւ նաեւ Հալէպը՝ իբրեւ մէկը այն երկու օրինակներէն, որոնցմէ պէտք է խուսափին Հայաստանի քաղաքացիները:

Պէյրութն ու Հալէպը, երկու քաղաքներ, ուր մեր նախնիներէն շատերը կը ցանցան թեմէն ծողպրիլ, այնտեղ հանգրուանիլ ու իրենց համար նոր կեանք ստեղծել, վերոնշեալ պարագաներուն բնականաբար կը ներկայացուին իբրեւ բացասական օրինակներ:

Հալէպի պատիւը պաշտպանելու պարտականութիւնը կը թողու՞մ Սուրիոյ այդ վաճառաշահ քաղաքին մէջ ծնած, մեծցած ու նոյնիսկ այս դժնդակ օրերուն այդ քաղաքին կառչած ազգակիցներուս:

Ես պիտի գրեմ Լիբանանի եւ անոր մայրաքաղաք Պէյրութի մասին, ուր մայրական կողմս հաստատուած է Կիլիկիոյ պարպումէն անմիջապէս ետք՝ 1920-ականներուն, իսկ հայրական կողմս՝ 1940-ականներու երկրորդ կիսուն: Ես ծնած, մեծցած ու հայկական դպրոց յաճախած եմ Լիբանանի մէջ՝ քաղաքացիական 15-ամեայ պատերազմի դժուար տարիներուն: Լիբանանի մէջ անցուցած եմ կեանքիս մեծագոյն մասը: Այս սողերը կը գրեմ Լիբանանի մեր ընտանեկան բնակարանին մէջ, ուր հաստատուած ենք 1980ի Դեկտեմբերէն ի վեր: Ծնողներս գիս դաստիարակեցին ըլլալ հայ, հպարտանալ հայութեամբ ու Հայաստանով, բայց Հայաստանէն ոչ նուազ կը սիրեմ նաեւ Լիբանանը, իր ժողովուրդն ու մշակոյթը: Հայաստանի նման, Լիբանանին ալ կը ցանկամ լաւագոյնը: Լիբանանի թերութիւններուն վերաբերեալ նոյնքան կը սրտնեղիմ ինչքան՝ Հայաստանի բացթողումներուն:

Մասնագիտութիւնս պատմութիւնն է, եւ ինձի համար անառարկելի ճշմարտութիւնն է, որ չի շողութիւնը՝ անհատական թէ՛ հաւաքական, անխուսափելիօրէն ընտրովի կ'ըլլայ՝ կամայ թէ՛ ակամայ: Լիբանանն ալ աշխարհի բոլոր երկիրներուն նման ունի իր օրինակելի ու բացասական երեսները: Եթէ Հայաստանի մէջ որոշ շրջանակներու համար այսօր շահաւէտ է Պէյրութը ներկայացնել իբրեւ

խորհրդանիշ երկրի մը, ուր քաղաքական հարցերը գէնքով ու բռնութեամբ կը լուծուին միայն, այս գրութեան մէջ ես ալ ընտրովի պիտի ըլլամ, բայց հակառակ ուղղութեամբ ու պիտի չիշատակեմ դէպքեր, որոնք կ'ընդգծեն Լիբանանի ժողովուրդին հայրենասիրութիւնն ու ազատասիրութիւնը, ժողովրդավարական կարգերու եւ աւանդոյթներու հանդէպ անոր յարգանքը: Լիբանանի պատմութիւնը լիարժէք չ'ըլլար, եթէ անգիտանանք երկրին ու անոր մայրաքաղաք Պէյրութի կենսագրութեան ստորեւ ներկայացուող դրուագները 20րդ ու 21րդ դարերէն:

Լիբանանն՝ իբրեւ պետութիւն, իր այսօրուան սահմաններով, գոյացաւ Օսմանեան Կայսրութեան փլատակներուն վրայ, 1920ին: Պէյրութն անոր մայրաքաղաքը եղած է առաջին օրէն: Պէյրութն ալ վանի ու Երեւանի չափ հին քաղաք է՝ հարուստ հնագիտական ժառանգութեամբ: Այսուհանդերձ, 1920էն անմիջապէս ետք՝ շուրջ քառորդ դար, Լիբանան փաստացիօրէն կը գտնուէր ֆրանսական քաղաքական ու ռազմական իշխանութեան տակ: Միայն Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ՝ օգտուելով միջազգային քաղաքական իրավիճակէն, Լիբանանն ու Սուրիան՝ համարեալ՝ միաժամանակ, Ֆրանսայի (այսինքն՝ Զօրավար Շարլ Ծը Կոլլին) պարտադրեցին, որ 1943ին ձանձնայ իրենց ինքնիշխանութիւնը, իսկ 1946ին՝ առանց որեւէ պայմանի, իր գօրքերը դուրս բերէ Լիբանանէն ու Սուրիայէն: Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ (գուցէեւ աշխարհի մէջ, վստահ չեմ), Լիբանանն ու Սուրիան առաջին երկիրներն էին ուրկէ գաղութարարը հեռացաւ առանց որ կարենայ՝ իբրեւ «կամաւոր» հեռացման գին, իր նախկին գաղութին պարտադրել այսպէս կոչուած «անհաւասար» պայմանագիր ու միառժամանակ շարունակել այնտեղ վայելել որոշ առանձաշնորհումներ:

Լիբանանի քաղաքական համակարգը կիսանախագահական է: Մինչեւ 1990ի սահմանադրական փոփոխութիւնները, հանրապետութեան նախագահը կը վայելէր գործադիր իշխանութեան լայն իրաւունքներ, թէեւ ան կ'ընտրուէր ոչ թէ՛ ուղղակի ժողովուրդէն, այլ՝ ժողովուրդին կողմէ՛ չորս տարի ժամկէտով ընտրուած խորհրդարանէն: Լիբանանի մէջ խորհրդարանական ընտրութիւններ տեղի կ'ունենան 1922էն սկսեալ, նոյնիսկ՝ ֆրանսացիներու ներկայութեան

շրջանին: Անկախ Լիբանանի հանրապետութեան առաջին նախագահն էր Պշարան ալ-Խուրին (արեւելահայ արտասանութեամբ՝ Բիշարա ալ-Խուրի): Ան կը համարուի Լիբանանի անկախութեան հայրերէն: 1943ին՝ հակաֆրանսական պայքարի օրերուն, ան նոյնիսկ ֆրանսացիներու կողմէ՛ ձեռքազրկուած էր ու ժամանակաւորապէս բանտարկուած: Սակայն, ինքն ալ ի վերջոյ վարակուեցաւ իշխանաւորներուն մօտ լայն տարածում գտած իշխանութիւնը հնարաւորինս երկար պահելու ախտին: Համաձայն Լիբանանի սահմանադրութեան, նախագահը կը պաշտօնավարէ վեց տարի եւ կրնայ վերընտրուիլ միայն առաջին պաշտօնավարութեան աւարտէն վեց տարի ետք: (Ի դէպ, այդպիսի վերընտրութիւն երբեք տեղի չէ ունեցած): Խուրի կեղծեց 1947ի հերթական խորհրդարանական ընտրութիւնները, ապահովեց ընտրութիւնը իրեն հլու խորհրդարանի մը, որ 1948ին փոփոխութեան ենթարկեց սահմանադրութիւնը, եւ Խուրի 1949ին սկսաւ նախագահական իր երկրորդ վեցամեայ ժամկէտը: (Լիբանանի մէջ խորհրդարանը կրնայ փոխել սահմանադրութիւնը պատգամաւորներու ձայներու երկու-երրորդով): Միաժամանակ, երկրէն ներս կար լայն դժգոհութիւն նախագահի հարազատ եղբօր՝ Սալիմ ալ-Խուրիի վարքագիծէն: Օգտուելով իր եղբօր դիրքէն, ան կը փորձէր արագօրէն հարստանալ: Ժողովուրդը սկսած էր վերջինս «Սուլթան Սալիմ» կոչել: Ի վերջոյ, 1952ին նախագահ Խուրիի դէմ ստեղծուեցաւ քաղաքական լայն դաշինք (կոալիցիա) եւ վերջինիս համագային գործադուլի կոչը լայն արձագանգ գտաւ: Խուրիի դիմեց բանակի գլխաւոր հրամանատարին, որ իր զինուորներով բանալ տայ փակ խանութիւնները: Հրամանատարը մերժեց՝ ըսելով, որ բանակի պարտականութիւնը միայն երկիրը արտաքին թշնամիէն պաշտպանելն է եւ թէ բանակը չի խառնուիր երկրի քաղաքական ներքին վէճերուն: Հրամանատարի մերժումէն ետք, Խուրի մտաւ նախագահական ապարանքի մատուռը, ծունկի եկաւ, աղօթք մը արտասանեց (այս մասին կան ականատեսներու գրաւոր վկայութիւններ ու պահպանուած է լուսանկար) եւ ապա՝ վերադառնալով իր գրասենեակը, գրեց ու ստորագրեց իր հրաժարականը՝ կարծ ու կարուկ:

Այսօր, լիբանանցիները Խուրին կը չիշեն աւելի շատ իբրեւ անկախութեան հայր քան թէ իբրեւ

կաշտակեր նախագահ: Իր անունով կը կոչուի Պէյրութի կարեւոր պողոտաներէն մէկը, որու եզրին կանգնած է իր արձանը: Ամէն տարի, անկախութեան տօնին, նախարարներ ծաղկեպսակ կը գետեղեն իր եւ 1943ին իր հետ կալանաւորուած լիբանանցի քաղաքական գործիչներու շիրիմներուն վրայ:

Նախագահ Քամիլ Շամուն՝ Խուրիի յաջորդը, նոյնպէս իր պաշտօնավարութեան աւարտին՝ 1958ին, գայթակղութիւնն ունեցաւ փորձել փոխել տայլու սահմանադրութիւնը եւ այդպիսով վեց տարիով երկարաձգել իր իշխանութիւնը: Այս անգամ, ան իր դէմ յանդիման գտաւ ժողովրդական զինուած ապստամբութիւն մը, որ տեւեց վեց ամիս եւ իրեն պարտադրեց հրաժարելու իր ժամկէտը երկարաձգելու երազէն: Պաշտօնական ժամկէտի աւարտին, Շամուն իշխանութիւնը փոխանցեց խորհրդարանի կողմէ ընտրուած իր յաջորդին, որ իր քաղաքական հակառակորդներէն էր: Շամուն մնաց քաղաքականութեան մէջ մինչեւ իր մահը (1987ին), նախագահական իր ժամկէտի աւարտէն ետք մի քանի անգամ գբաղեցուց նախարարական պաշտօններ, անգամ մը նոյնիսկ պաշտօնապէս իր թեկնածութիւնը ներկայացուց նախագահական թափուր աթոռին համար, բայց երբեք չվերադարձաւ նախագահի պաշտօնին:


1958ին ընտրուած նախագահը լիբանանեան բանակի նախկին գլխաւոր հրամանատար Ֆուատ Շեհապն էր (արեւելահայ արտասանութեամբ՝ Ֆուադ Շեհաբ): Ան պաշտօնավարեց մինչեւ 1964 թուականը: Այդ տարի, Լիբանանի մէջ տեղի ունեցան ե՛ւ խորհրդարանական ե՛ւ նախագահական ընտրութիւններ: Խորհրդարանական ընտրութիւնները նախորդեցին նախագահականին: Նորընտիր խորհրդարանի 99 պատգամաւորներէն 79ը խնդրագրով դիմեցին Շեհապին, որ ընդունի սահմանադրութեան փոփոխութիւն եւ շարունակէ պաշտօնավարել եւս վեց տարի: Շեհապ մերժեց առաջարկը, հսկեց որ ժամանակին եւ ըստ սահմանադրութեան սկզբունքներուն կատարուի իր յաջորդին ընտրութիւնը, ապա՝ հեռացաւ քաղաքական կեանքէն ու իր ապարանքին մէջ մահացաւ 1973ին:

1968ի խորհրդարանական ընտրութիւններու նախօրեակին, երկրին մէջ աւելցած էր դժգոհութիւնը Շեհապի եւ անոր համախոհ յաջորդին վարած քաղաքականութեան նկատմամբ: Քաղաքական

Շար.ը էջ 18


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՅԱՂԹԵՑԻՆՔ, ԹԵ՞ՊԱՐՏՈՒԵՑԱՆՔ

Սկիզբն իմաստութեան երկիր Տեառն (Առակաց, Ա. 7)

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ազգովին յաղթեցինք, որովհետեւ անհաւատալի կործանարար արհաւիրքէ մը ազատեցանք եւ հայու արիւնը անգամ մը եւս ի գուր չթափուեցաւ: Տակաւին չենք կրցած հեռացնել մեր մտապատկերէն մղձաւանջային այն տառապանքները զորս ապրեցանք Լիբանանի քաղաքացիական առաջին պատերազմի եղբայրասպան կռիւներուն ատեն, երբ զոհ գացին անմեղ երիտասարդներ հայու «վրիժառու» գնդակներով:

Անկասկած որ Հայրենիքին մէջ թաւալող վերջին մտահոգիչ դէպքերը ունեցան եւ պիտի ունենան իրենց դառն հետեւանքները մեր քաղաքական, տնտեսական, հասարակական-ընկերային կեանքին վրայ: Կիրքի եւ ատելութեան դրսեւորումները փոթորկեցին իւրանքանչիւր հայու ոգին ամէնուրեք: Պահ մը մոռցուեցաւ հանդարտ ու կշռադատեալ դատողութիւնը, եւ շիկացած կիրքեր, շօշափելի գիտակցութեանէ զուրկ, ամբոխները խելագարեցին:

Ճգնաժամային այդ իրավիճակէն կրնային միայն օգտուել մեր դարաւոր թշնամիները, որոնք սուր ի ձեռին տիւ ու գիշեր կը սպասեն մեր սահմաններուն մօտ, մեզ կործանելու վճռակամութեամբ: Այս ծանր փորձութենէն զուրս եկանք յաղթական, որովհետեւ յուսատական քաղաքական գործողութիւններ չեն կրնար հասնիլ արդար լուծումի մը, երբ կը բացակայի այդտեղ կշռադատուած դատողութիւնը: Սակայն եւ այնպէս, այս բոլորին դրական կողմը այն եղաւ, որ Հայաստանի նախագահ անդրադարձաւ թէ այսուհետեւ «անհրաժեշտ է արագացնել արմատական փոփոխութիւնների գործընթացը»:

Յաղթեցինք՝ որովհետեւ Հայաստանի նախագահին պաշտօնական ելույթը ինքնին «յուսադրիչ» փաստ մըն էր այն իրողութեան, թէ մեր ժողովուրդը նուազագոյն զոհերով ու վնասներով դուրս եկաւ այս տագնապէն, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ եղբայրասպան արիւնահեղութենէն, եւ մեր քաջարի ազատամարտիկները, որոնք տարիներ առաջ իրենց կեանքի գնով պատերազմած էին հայրենի հողերը ազատագրելու եւ պաշտպանելու համար, արժանաւորապէս պահեցին իրենց նահատակութեան ու յաղթանակի պսակը եւ արժանացան ժողովրդային գնահատանքին:

Անհեթեթ է այսուհետեւ գործածել ահաբեկիչ, «տեռորիստ» մակդիրը մեր հերոս ազատամարտիկներուն նկատմամբ, որովհետեւ անոնք մեր բոլորին համար անխտիր դէպի մահ վազեցին եւ յաւերժ արժանացան հերոս-նահատակ տիտղոսներուն: Ժողովուրդի մը քսանհինգ տարիներու վրայ երկարող ընկերային արդարութիւն պահանջելու յուսատական պոռթկումը ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ: Դանակը հասած էր ոսկորին....

Շատ դիւրին է քննադատել թէ՛ ազատամարտիկները եւ թէ՛ բիրտ ու կոպիտ ոստիկանական ոյժերուն՝ անգէն ժողովուրդի դէմ կատարած ասպատակութիւններն ու չարաշահումները: Մեր նպատակը քննադատութիւն չէ, այլ ախտաճանաչումն անդին լուծումներ որոնել է, ստեղծելով այնպիսի մթնոլորտ, ուր յարգուին մարդ-

կային ազատութեան բոլոր նորմերը եւ ազատ արտայայտութեան սահմանադրական իրաւունքները:

Եւ վերջապէս... պարտուեցանք որովհետեւ բիրտ ոյժը անգամ մը եւս յաղթեց ժամանակաւորապէս եւ խեղդեց մարդկային խղճի բոլոր ճիւղերն ու ճիգերը՝ արդարութիւն եւ հաւասարութիւն ստեղծելու: Այո՛ պարտուեցանք, որովհետեւ քսանհինգ տարիներու վրայ երկարող տառապանքները չվերացան մեր ժողովուրդի ամէնօրեայ կեանքէն, եւ տակաւին, յուսահատական վիճակի մէջ, իւրաքանչիւր հայաստանաբնակ հայ կը մտածէ հայրենիքը թողուլ եւ հեռանալ (վերջնականապէս, որոնելու համար իր բախտը օտարութեան մէջ): Պարտուեցանք՝ որովհետեւ սփիւռքը իր բոլոր կառույցներով, նամանակաւոր աւանդական կուսակցութիւններով, սառն պաղարիւնութեամբ դիտեց այս բոլորը եւ ըսելիք մը չունեցաւ: Մեր սնանկացած մամուլը միայն յայտարարութիւններ հրատարակեց եւ քաջութիւնը չունեցաւ խմբագրականներով թէ՛ քննադատելու եւ թէ՛ լուծումի առաջարկներ ներկայացնելու:

Պարտուեցանք՝ որովհետեւ զրչի մեր երբեմնի յանդուգն հերոսները չկան այլեւս, այլ կան միայն հոգեպէս սնանկացած եւ կրտուած մտաւորականներ, որոնք կուրծքերնին զարդարած անարժան եւ աժան շքանշաններով, - Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Սփիւռքի Նախարարութեան կողմէ շնորհուած,- որպէս ստորնաքար զարշապար կը մնան՝ յանկարծ իրենց «բարձունք»էն վար չզլտորուելու համար:

Պարտուեցանք՝ որովհետեւ բոլոր անոնք, որոնք բեմերէն եւ խորաններէն բարձրադրակ կը գոչէին՝ «ժողովուրդով եւ ժողովուրդին համար», չկան հոն՝ ուր պէտք էր ըլլային - ժողովուրդին կողքին՝

Շար.ը էջ 19

ԱՐԱՐԵԿՉՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՓՈՒՅՉ ԱՊՏԱԿ

ՍՈՒՐԵՆ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Հայաստանը եւ ողջ հայութիւնը քառօրեայ պատերազմից յետոյ դարձեալ ցնցուեց: Սակայն յուզմունքի եւ ցնցումների առիթը այս անգամ այլ բան էր:

Արցախեան պատերազմի ազատամարտիկներից մի խումբ, որոնք անգամ հերոսի կոչում էին ստացած, զինուած յարձակում գործեցին Երեւանի ոստիկանական պարեկապահակային գնդի վրայ եւ պատանդ վերցնելով ոստիկաններին ներկայացրին իրենց քաղաքական պահանջները: Մաքսիմալ պահանջներն էր նախագահի հրաժարականը, մինիմալը Արցախեան պատերազմի ժամանակ իր ուրոյն լուծման ներդրած ժիրայր Սեֆիրեանի, ինչպէս նաեւ քաղաքական բանտարկեալների ազատ արձակումը: Յուզմունքից լարուած այս օրերի ընթացքում պատանդ վերցրած ոստիկանները ազատ արձակուեցին: Բաց ունեցանք երեք ոստիկանի կորուստ, բազմաթիւ վիրաւորներ եւ մէկ ինքնահրկիզում: Ժողովրդական մի զգալի զանգուած հրապարակներում մեծ հաշուով պաշտպան կանգնեց «Սասնայ ծուր» կոչուած զինուած խմբին: Չնայած այն բանին, որ հեռուստատարիքներով որոշ քաղաքական իշխանամէտ գործիչներ, զինուած խմբին ահաբեկիչներ կոչելով փորձեցին պախարակել նրանց գործողութիւնները, դիտարկելով այն, լոկ որպէս պետականութեանը հարուածող գործողութիւն: Քանի որ ոստիկանութիւնը համարուում է պետական ենթակառուցներից մէկը, այստեղ առաջանում է շատ նուրբ եւ յաճախ զգացական դաշտի վրայ ձեւաւորուող բաժանարարներ եւ անջրպետներ: Որտեղ է հայրենի պետութեան եւ իշխանութեան սահմանազատող գծերը:

Ովքեր որ կը փորձեն պետականութիւնը եւ իշխանութիւնը նոյնացնելով, հայրենասիրական զգացմունքային հողի վրայ, իրենց հունձքը անել, պէտք է հասկանան, որ ժամանակները փոխուել են: Իրա-

կան եւ կեղծ ու իմիտացիոն հայրենասիրութեան չափորոշիչները մատչելի են դարձել շատ-շատերին: Տեղեկատուական միջոցների ներկայ համակարգը իր խառնաշփոթով հանդերձ, այդ հնարաւորութիւնը տալիս է տարբերակելու ճիշդը սխալից, իրականը կեղծից:

Հարցին պէտք է նայենք պատճառահետեւանքային կապերի ընդհանուր կոնտեքստում:

Եթէ զինուած խմբի գործողութիւնների տրամաբանութիւնը եւ ժողովրդի կողմից նրանց անվտանգութեան ապահովմանը ուղղուած աջակցութիւնը դիտարկենք ոչ թէ սեւ ու սպիտակ գոյներով, այլ երկրի քաղաքական ու սոցիալական կեանքի ներկայանակի գոյներով, կը տեսնենք որ «Սասնայ ծուրի» անընդունելի համարող գործողութիւնը տառապող, բայց յուսահատօրէն բարեփոխումների սպասող ժողովրդի ճիւղն է:

Ժիրայր Սեֆիրեանի, կամ միւս քաղաքատարկեալների բանտից ազատումը չէր միակ պատճառը: Բունկման շարժառիթները բազմաթիւ են ու բազմազան:

Դիտարկենք մի քանիսը. -Սոցիալական հսկայ խնդիրների բեռի տակ կքած ժողովրդի ցասումը, բռնկումների առիթ կարող է լինել ամէնուրեք:

-Ազատագրուած հողերի վերադարձի մասին սուտ կամ ճիշդ լուրերը, մանաւանդ պատերազմի բովով անցած ազատամարտիկների շրջանում զգայացուց շարժառիթ է համարուում:

-Դատական համակարգում պատուիրուած եւ հրահանգաւորուած դատավարութիւնների շարքը, բողոքի հուժկու ալիքի առիթ է դառնում: Իսկ դատական համակարգի նկատմամբ յուսախաբուութիւնը ամենայն աւերիչ հետեւանքն է ունենում:

Հողի ու ջրի պէս ներդրումների կարիք ունեցող տնտեսութիւնում կապիտալի ներգրաւման փոխարէն կատարուում է արտահոսք:

Շար.ը էջ 19

ARARAT-ESKIJIAN MUSEUM AND ARMENIAN RUGS SOCIETY
Present world renown textile expert
Berdj Achdjian
An illustrative discourse
“pal·am·pore” – CHRONICLES ON A CLOTH
From India and beyond, early Armenian hand painted religious textiles and palampores that tell the stories of Armenian Princes, Merchants and traders

Saturday, August 20, 2016, 5:00PM
Ararat-Eskijian Museum, Sheen Chapel
15105 Mission Hills Road, Mission Hills, CA 91345

For further information, please contact
The Museum (747) 500-7585. the e-mail at ararat-eskijian-museum@netero.net

ADMISSION IS FREE DONATIONS WELCOME

Massis Weekly

Volume 36, No. 30

Saturday, AUGUST 20, 2016

Bako Sahakian: Reasonable, Correct and Equivalent Concessions Needed in Conflict Settlement



STEPANAKERT--Bako Sahakian, the president of Nagorno-Karabakh Republic (NKR), stated that a new phase will start in the conflict settlement if Azerbaijan shows respect for the ceasefire agreement signed in 1994 and NKR returns to the negotiation table, as well as when the psychological obstacles stemming from Azerbaijan's revanchist policy are overcome.

"Reasonable, correct and equivalent concessions are needed and we are prepared for [mutual] concessions if they do not disturb our country's security, if they are not creating opportunities for our adversary to launch new attacks against us," Sahakian said in an interview with the online newspaper of the French Parliament.

According to Sahakian, Azerbaijan must be able to abandon its xenophobic policy against Karabakh and Armenia, as well as its shortfall adventurism, committing itself to respecting the fundamental rights and freedoms of other people.

"Azerbaijan should be able to give

up its chauvinistic policy towards the Armenians of Karabakh and its futile gamble and commit itself to respecting the fundamental rights and freedoms of other peoples," the Karabakh leader stressed.

In the interview, Sahakian expressed his conviction that the international recognition of the Karabakh's independence from Azerbaijan will continue in the near future and will be more successful than before, which, according to him, will have a positive impact on stability in the South Caucasus. He stated that the right to self-determination is one of the fundamental principles of international law. "But this right becomes a necessary obligation when the state it is annexed to has no wish but to eliminate those people," Sahakian concluded.

Since 2012, seven American states, one Australian state and the parliament of the Basque Autonomous Community of Spain have passed bills and motions in favor of Karabakh's independence from Azerbaijan.

Armenian Prosecutors Asks Life Sentence for Russian Soldier

GYUMRI — Gyumri city Prosecutor has demanded a life sentence for Valery Permyakov, a Russian soldier charged with killing an Armenian family of seven in the city on January 12, 2015.

Six members of the Avetisian family—including a two-year-old girl—were shot dead, and a six-month-old baby—Seryozha—who was seriously wounded and died a week later.

The case led to mass protests in Gyumri and Yerevan against Russia's military presence in the country and calls for the trial to be heard by Armenian judges instead of Russian military judges.

In August 2015, a Russian court found Permyakov guilty of desertion and other charges. He was sentenced to 10 years in prison. He was then handed over to Armenia for trial on



murder charges.

Russia maintains a garrison of around 3,000 soldiers at the 102nd Military Base in Gyumri, some 120 kilometers northwest of the capital.

Rio 2016: Artur Aleksanyan Wins Gold, Migran Arutyunyan Wins Silver in Wrestling Weightlifter Simon Martirosyan and Gor Minasyan Win Silver



RIO DE JANEIRO — Artur Aleksanyan, the two-time reigning world champion at 98kg, has won Armenia's first gold medal in Rio Olym-

pics defeating Yasmany Daniel Lugo Cabrera, Cuba, 3-0 in the final.

Continued on page 2

Izvestia Daily: Armenia to Get Same Weapons from Russia as Azerbaijan



MOSCOW -- Russia has begun supplying weaponry to Armenia in accordance to the 200 million loan signed last year, Russian Izvestiya daily said on Tuesday.

The Armenian government moved to speed up the implementation of the loan agreement after the April clashes in Nagorno-Karabakh where Azerbaijan used some of the deadliest weapons that it purchased from Russia in recent years.

The newspaper writes that in addition to supplying military equipment to Armenia, Russia will also train Armenian specialists who will maintain the weapons. The Armenian Defense Ministry confirmed that supplies have already begun, however refused to reveal the list of weapons.

Experts believe that the matter primarily concerns heavy systems that will substantially increase the capabilities of the Armenian armed forces. At the same time, according to an Izvestiya

source "privy to the situation", while arms deliveries to Armenia have already begun, the complete list of weapons and military equipment to be purchased by the Armenian side is yet to be finalized between Yerevan and Moscow.

Expert on military affairs Andrey Frolov, who is the chief editor of the Russian Arms Export magazine, told Izvestiya that Russia is supplying Armenia with about the same set of weapons that was previously purchased by Azerbaijan. "These supplies will undoubtedly improve the military balance for Yerevan, but Baku will still retain certain superiority," Frolov said.

"There is too much of a difference in the sizes of the military budgets of Armenia and Azerbaijan. Here it is difficult to speak of parity. It is possible only not to bring the gap to the critical level through targeted investments," the Russian military expert added.

Armenian Journalists Demand Punishment for Their Assailants



YEREVAN (Mediamax) -- "For Freedom of Speech" rally took place on Wednesday August 10 at Freedom Square in Yerevan, initiated by a group of heads of leading Armenian media outlets, who decided to say no to police brutality and condemn attacks on journalists, as well demand immediate punishment for those who tried to prevent journalists from carrying out their duties.

Mediamax Media Company Chief Editor Davit Alaverdyan delivered a statement on behalf of the organizers of the rally. In particular, the statement reads:

"Although the acting government doesn't miss a chance to state that it appreciates the role of freedom of speech and media, in fact it does everything to hinder to professional performance of journalists, and creates obstacles and pressure on the media. Journalism has been compromised on the state level for years, and attempts were made to plant mistrust towards the "fourth estate" among the public, the same mistrust that we currently have for the legislative, executive and judiciary branches of power in our country.

There have been many records of the authorities' aggressive attitude towards journalists of various fields, which was expressed in violence during rallies.

On June 23 last year, journalists suffered from targeted violence during "Electric Yerevan" protests, and no one was held accountable for it.

After the events of this July,

Armenian Investigative Committee announced that it placed charges against 2 police officers, but there is no guarantee that all guilty parties will receive proper punishment for their actions. This cannot continue.

We believe that the apologies and calls to forget what happened, which President of Armenia Serzh Sargsyan addressed on August 1 to the journalists who carried out their duties on July 29, are not enough to ensure safe and free journalism in Armenia. Practical and noticeable measures are needed.

- All those, regardless of their position, who dared to target journalists on July 29, breaking their equipment and using violence against them, should be subjected to punishment outlined by Article 164 of Armenia's Criminal Code (Hindrance to the legal professional activities of a journalist) within 2 months at most. The journalistic public is waiting for specific steps and arrests.

- The negative rhetoric against journalism, implemented on the state level, should cease. We work to ensure the people's right to be informed, outlined by Armenia's Constitution, and we hope that the public will not remain indifferent to this matter.

- The journalists are resolved to fight for realization of their professional rights. We are prepared to use all journalistic means up to extreme measures to achieve our goal, if this statement is not followed by certain actions."

The initiative group consists of 12 leading online media outlets.

Artur Aleksanyan Wins Gold

Continued from page 1

Aleksanyan was completely dominant in his weight class. He won back-to-back matches by technical fall in the quarterfinals and semifinals, defeating Alin Alexuc Ciurariu, Romania, 8-0 and Cenk Ildem, Turkey, 9-0.

Arutyunyan In 66kg division Armenia's Migran Arutyunyan was defeated by Serbia's Davor Stefanek to win silver. The bout ended in a 1-1 score, but Stefanek got the win on criteria because he was the last one to be awarded a point.

In the semi-finals Arutyunyan

beat Rasul Chunayev, Azerbaijan, 4-1.

In Weightlifting Simon Martirosyan won silver in men's 105kg weightlifting class. Martirosyan lifted a total of 417kg.

Ruslan Nurudinov of Uzbekistan won the gold with a total of 431kg and Kazakhstan's Alexandr Zaichikov earned the bronze with a total of 416kg.

Martirosyan born in Etjmiadsin's Haykashen village in 1997 is a Junior Olympic champion.

Gor Minasyan earned a silver medal in +105kg weight losing to Georgia's Lasha Talakhadze and Irakli Turmanidze of Georgia wins the bronze.

Fresh Russian Arms Supplies to Armenia 'In Progress'



YEREVAN (RFE/RL) -- Russia has begun supplying Armenia with new weapons in line with multi-million dollar defense contracts signed by the two allied states, Defense Minister Seyran Ohanian said on Tuesday.

The Armenian government is to pay for them with a \$200 million loan that was allocated by Moscow a year ago.

The government moved to speed up the deal's implementation following four-day hostilities around Nagorno-Karabakh that broke out in early April. It instructed the Armenian Defense Ministry to promptly negotiate supply contracts with relevant Russian government agencies.

"Almost all of the contracts have been signed and interstate procedures [for their implementation] completed," Ohanian told reporters after inspecting Armenian troops stationed along the heavily militarized border with Azerbaijan.

"Through existing instruments and within the framework of agreements reached in the past, imports of [Russian] weapons are now in progress," he said, speaking in the northern Tavush province.

In late June, two of Ohanian's deputies visited Moscow for talks with senior officials from Russia's Defense Ministry, a Russian government agency overseeing arms deals with foreign states and

Rosoboronexport, the state arms exporter.

Ohanian did not specify the types or quantities of weapons which Armenia will buy at domestic Russian prices set well below international market-based levels.

In February, Moscow released a long list of Russian-made weaponry covered by the \$200 million. It includes the Smerch multiple-launch rocket system, TOS-1A heavy flamethrower using thermobaric rockets, anti-tank weapons and shoulder-fired surface-to-air missiles.

In recent years, Russia has reportedly sold 18 Smerch launchers and as many TOS-1A systems to Azerbaijan along with more than 100 T-90 tanks, over 30 combat helicopters and other offensive weapons. The Russian arms deliveries to Armenia's arch-foe, worth at least \$4 billion, stemmed from contracts signed in 2010-2011.

Armenian leaders stepped up their criticism of the Russian arms sales to Baku following the April escalation of the Karabakh conflict. The Russians dismissed it, saying that they provide weapons to both Armenia and Azerbaijan and thereby sustain the "military balance" in the conflict. The Russian ambassador to Azerbaijan said last month that Moscow intends to sign fresh defense contracts with Baku.

Spain's Benalmádena Officially Recognizes Armenian Genocide



The Spanish town of Benalmádena has officially recognized and condemned the Armenian Genocide on Friday.

The City Council and all the political forces within it unilaterally voted in favor of the institutional resolution, the Armenian MFA press-service reports.

Thereby, Benalmádena joined over two dozens of Spanish cities which have recognized the Armenian Genocide.

U.S. Air National Guardsmen Helping Hands at Armenian Medical Centers



YEREVAN -- There are some extra helping hands at the Gavar and Hrazdan Medical Centers, as a group of U.S. medical professionals work side-by-side with their Armenian counterparts to save lives, ease pain, and treat illnesses.

About 40 U.S. military medical professionals (doctors, nurses, EMTs, paramedics, and medical technicians) from the Kansas Air National Guard 184th Medical Group, based out of McConnell Air Force Base in Kansas, are in Armenia for a two-week humanitarian mission. Joined by 3 combat medics from the 6th Battalion RIFLES of the British Army, the medical experts are assisting the local staff at Gavar and Hrazdan Medical Centers by providing peer-to-peer mentoring and assistance.

"This program not only gives the hospitals the help of some talented medical experts to provide continued quality care, it also serves as a valuable training and experience for our U.S. and UK medical staff," said U.S. Am-

bassador to Armenia Richard Mills, Jr. "The U.S. volunteers are gaining experience with conditions and ailments that may not be common in the U.S. And working with Armenian doctors and nurses, they gain a better understanding of working across cultures, a valuable skill for a unit that is ready to deploy worldwide on short notice."

Along with offering helping hands and consultations, the joint US/UK team is providing professional training to the hospital staff on topics such as CPR, advanced cardiac life support, trauma treatment, burn treatment, and infection control procedures. They are also busy visiting children at local orphanages to offer nutrition guidance, dental care, and classes on healthy living.

This is the first mission of this type in Armenia and is made possible through the U.S. European Command Humanitarian and Civic Action Program and the Kansas-Armenian State Partnership Program.

Armenia's First International Art Event Aims to Regenerate the Region



LONDON (The Art Newspaper) -- Unemployment and emigration may be on the rise in Armenia, but a new art initiative launching on 22 August aims to stem the brain drain and develop a road map for the cultural and economic development of the country.

The Dilijan Arts Observatory will see artists, designers, cultural historians and environmental scientists convene for three weeks in and around the

ancient spa town of Dilijan, once a favourite with the composers Dmitri Shostakovich and Benjamin Britten. The observatory will have its headquarters in the former Soviet Impuls electronics factory, which formerly employed 4,000 people.

Participants—a third of whom are Armenian—will present their research on local craft, astronomy and Soviet architecture, among a myriad

Getty Foundation to Renovate Armenian Writers' Union Sevan Resort



LOS ANGELES -- Getty Foundation has chosen Armenian Writer's Union Sevan guesthouse as a heritage of Soviet modernism and will support the scientific analysis of the building providing \$130,000.

"A Getty grant will support the methodical and scientific analysis of the Sevan resort, and the resulting conservation management plan will set a precedent for valuing modernist heritage not only in Armenia, but also in other post-Soviet and post-socialist countries," Getty Foundation has stated in a press release.

Between 1932 and 1965 during Soviet rule, a picturesque retreat for the Writers' Union of Armenia was built on the sprawling shore of Lake Sevan outside the nearby capital of Yerevan. The two buildings that form the Sevan Writers' Resort—the guest house (1932-1935) and the lounge (1963-1965) --were designed with strikingly divergent aesthetics, but share the same architect. The markedly different stylistic choices are the result of Armenia's close, but often fraught relationship with the Soviet Union.

The guest house, designed by

Gevorg Kochar (1901–1973) and Mikael Mazmanyán (1899–1971), is a model of early Soviet avant-garde ideals, utilizing abstract forms to represent social utopianism and creating a functional, progressive and egalitarian space that exemplified the ideals of the revolution. Two years after the completion of the guest house, the architects fell victim to the Stalinist regime; they were arrested and exiled to Siberia for 15 years. Rehabilitated after Stalin's death, Kochar was commissioned to add the lounge and reconstruct the guest house in 1963.

Emulating the international style, the new building complemented the guest house and harmonized the ensemble with the natural landscape, incorporating the view of medieval monastic churches located at the end of the peninsula. To this day, the site continues to be used by Armenian authors for rest and contemplation.

The restoration project will last 3-4 years, but the funding will cover only the 1st stage of the development of scientific research and conservation plan. Considering the outcomes of the 1st stage, the development of the project implementation will be clear.

of other subjects, in a public event on 10 and 11 September, which will feature an all-night symphony, food tasting, performances and exhibitions. The line-up includes the Armenian curator Vigen Galstyan, the Lebanese artist Haig Aivazian and the Australian fashion designer Misha Hollenbach of Perks and Mini.

There are plans to hold a second think tank next year, which will culminate in exhibitions at the Hamburger Bahnhof, Berlin, in November 2017 and the Centre Pompidou, Paris, in summer 2018.

"We didn't want to create a biennial or put pressure on artists to produce works in three weeks, but we didn't want it to be a purely discursive summit either," says Clémentine Deliss, the director of the Weltkulturen Museum in Frankfurt am Main who is the curator behind the project.

Instead, the long-term plan is to establish an art academy in Dilijan that will encompass what Deliss describes as "life practices" such as botany, medicine and law. As well as teaching and research, the academy might also be a site for the production of goods. "I'm interested to see

if we can put our finger on a prototype; it could be a plant-derived product like Moroccan argan oil," Deliss says. "The idea is to create a model for an institution that could apply to all parts of the world."

Vigen Galstyan says the idea of culture being a force for regeneration in Armenia has existed since the population voted overwhelmingly for independence from the Soviet Union in 1991. "Culture as a form of production has always been the nexus of Armenian life," he says. "It is hoped the Dilijan Arts Observatory will come up with ideas that will have a real impact on the region, which it so sorely needs."

The project is supported by the philanthropists Ruben Vardanyan and Veronika Zonabend, who founded the Dilijan Art Initiative, sponsors of the Golden Lion-winning Armenian pavilion at the Venice Biennale in 2015. The Dilijan Art Initiative also supported 13 artists at last year's Istanbul Biennial whose works related to the Armenian genocide, an atrocity not recognised by the Turkish state 100 years on. The couple are also behind IDEA (Initiatives for Development of Armenia) Foundation and United World College Dilijan.

Symphony Written by Alan Hovanes Donated to Lark Musical Society's Museum of Armenian Culture

GLENDALE -- On August 3, 2016, Lark Musical Society, a nonprofit based in Glendale, organized a luncheon to honor the former Majority Leader of the California State Assembly, Walter Karabian. In attendance were Lark's Board of Directors and other dedicated members of the Armenian American community.

The Karabians have been longtime collectors of rare Armenian artifacts and antiquities. Through Walter and Laurel Karabian's generosity, many of these treasures of Armenian



heritage are on prominent display in schools, churches, libraries, and repositories across the country, from Lark's own library to the Armenian library and Museum of America in Boston.

During the luncheon, Mr. Karabian shared with those in attendance the lessons, experience, and insight he has derived from his decades-long relationship with the law and the people of California, and of the importance of cultural preservation. Mr. Karabian endorsed the mission of Lark in preserving its cultural riches and adding to our legacy through education, performance, and research.

Those present were also touched to hear Mr. Karabian's loving testament to the memory of his wife Laurel,

whose devastating and untimely passing in 2014 was truly a loss for the Los Angeles Armenian Community. In the memory of his wife, Walter donated an original Alan Hovanes Symphony no. 28 manuscript for Lark's Armenian Cultural Museum. The manuscript is Hovanes' historic symphony composed and performed at the Dorothy Chandler Pavilion in 1976, under the baton of Maestro Ohan Durian. In addition to this timeless contemporary work, Karabian gifted Lark with the original program book of premiere designed by Mr. George Mandossian.

Lark is honored to be supported by passionate and committed cultural benefactors like Walter Karabian, whose life and deeds serve as example to the community at large.

Pan Armenian Entertainment Awards

LOS ANGELES -- The Armenian Diaspora and the collective performing arts world will experience 2016's quintessential cultural event of the year when the red carpet rolls out for the "2016 Pan Armenian Entertainment Awards" at the Microsoft Theater in Los Angeles, California on Sunday, November 6, 2016.

Organized by the Global Arts International in association with PanArmenian Media Group, the "2016 Pan Armenian Entertainment Awards" will be the first event of its kind, honoring and awarding artists from every corner of the world for their labor of love in the fields of music, film, television, media and fashion.

An assortment of scintillating performances from superstars around the world will outline the festivities.

With a dispersed Diaspora, the mission of the "2016 Pan Armenian Entertainment Awards" is to encourage the preservation of culture and history—both historic and contemporary—by bridging the national and international gaps between generations.

This further will be evidenced as the "2016 Pan Armenian Entertain-



tainment Awards" will feature a first-rate roster of celebrities, luminaries and icons for the honorary evening. The "Who's Who" list of respected and renowned personalities and faces from yesteryears and today will be present.

The awards ceremony will be held at Microsoft Theater, located in the world famous L.A. Live entertainment complex in Downtown Los Angeles. It will be broadcasted by PanArmenian TV in the United States, and Armenia TV and Armenian Public Television in Armenia.

"Armenian Church Altar Curtains and Palampores of the Armenian Merchants"

ARARAT-ESKIJIAN MUSEUM AND ARMENIAN RUGS SOCIETY
Present world renown textile expert
Berdj Achdjian

An illustrative discourse
"pal-am-pore" -- CHRONICLES ON A CLOTH
From India and beyond, early Armenian hand painted religious textiles and palampores that tell the stories of Armenian Princes, Merchants and traders

Saturday, August 20, 2016, 5:00PM
Ararat-Eskijian Museum, Sheen Chapel
15105 Mission Hills Road, Mission Hills, CA 91345

MISSION HILLS -- The Ararat-Eskijian Museum in joint cooperation with the Armenian Rug Society will present an illustrative discourse "Armenian church Altar Curtains and Palampores of the Armenian merchants" on Saturday August 20, 5 PM, Ararat-Eskijian Museum/Sheen Chapel 15105 Mission Hills Road, Mission Hills CA 91345.

From India and beyond, early Armenian hand painted religious textiles and Palampores tell the stories of Armenian Princes, Merchants, traders

and a general history of Armenian community in India during 17-18th. Century. Hand painted and block printed textiles that survived are testament of the community by world renowned textile expert Berdj Achdjian, Paris, France.

The event is free and open to the public. It will be in English and reception to follow.

For further information about this event please contact or ararat-eskijian-museum@netzero.net or tel# (747) 500 7585

Two Engineering Laboratories Enrich Educational Institutions in Armenia



LOS ANGELES -- The AAEF (Anoushavan Abrahamian Educational Fund), based in Los Angeles, California, remains true to its mission and recently took one more step on its way of creating a promising future for the youth in rural Armenia. The implementation of this new initiative will enable advanced learning of such vocational and professional traits that will create jobs for our youth in their native towns and villages.

By cooperating with the Union of Information Technology Enterprises (UITE), Anoushavan Abrahamian Educational Fund ("AAEF") ceremonially opened such newly equipped engineering laboratories in two educational institutions of rural Armenia. Considering the fact that this project enables studies in computer programming, 3-D printing, robotics design, development and management, opens the field to programs previously not included within the general educational program, hence receiving the appreciation of the Ministry of Education and Science of the Republic of Armenia for this highly regarded initiative.

The first engineering laboratory, equipped with seven computers, a 3-D printer, a drilling press and a robotics tool-collection was installed in the Industrial Pedagogical State College of the City of Armavir.

The second engineering laboratory opened in State Vocational School of Maralik, presents itself a unique chance for the youth of the Shirak region to gain knowledge in the fields of IT and engineering. The classes that are to be held in the laboratory will be comprised of six different class hours and will already begin in September. It is noteworthy to say, that the classes will be conducted completely free of charge and this is expected to enable a broader circle of students into the activities of the laboratory.


This benign act from the respected benefactor Mr. Abrahamian is an unprecedented progress in the field of public education in Armenia, as it is the first in its kind to make available the exploration of engineering for vocational schools in rural regions.

«ՄԵԾՆ ՄՈՒՐԱՏ» (ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊՈՅԱԾԵԱՆ)

ԱԲԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

Ահաւասիկ նոր հատոր մը՝ «Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան)».
ուրեմն՝ ողջոյն:

Ահաւասիկ նոր մատենաշար մը՝ «Հրասիրտները».
ուրեմն՝ կրկնակի ողջոյն:



Տոբթ. Եղիկ ձէրէճեան հետեւողական եւ բարեխիղճ պրպտուներով յաճախ ընթերցողներուն կը ներկայացնէ Ս.Դ.Ջնչակեան Կուսակցութեան պատմութեան ծալքերուն վերաբերող հատորներ ու յօդուածներ: 129 տարիներ երկարող յեղափոխական-քաղաքական-գաղափարական կազմակերպութեան մը պատմութիւնը բնականաբար պիտի ունենայ չլուսաբանուած էջեր ու դէպքեր, անոր բովէն անցած պիտի ըլլան օրինակելի տիպարներ եւ ոգեշնչող հերոսներ: Այդ շարքէն ցայտուն անձնաւորութիւն է Մեծն Մուրատ, որ եղած է նորատիպի հեղինակին լուրջ եւ խորագնին ուսումնասիրութեան թեման:

Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատմութեան ինստիտուտին կողմէ Երեւանի մէջ հրատարակուած հատորը կը բաղկանայ 248 էջերէ: «Որպէս Նախաբան» ներածական խօսքը գրած է նոյն ինստիտուտին տնօրէն, դոկտ. փրոֆեսոր, պատմաբան Աշոտ Մելքոնեան, որ կը նշէ. «Մեծն Մուրատ գրքով Եղիկ ձէրէճեանը շնորհակալ գործ է կատարել ընթերցողին ներկայացնելով Մեծն Մուրատ յեղափոխականին, ազգային-քաղաքական գործիչին, նուիրեալ հայրենասէրին, ամբողջական եւ վաւերական Մուրատին»:

9 գլուխներ ունեցող մենագրութիւնը յաջող նախաձեռնութիւն մըն է մեծ յեղափոխականին ամբողջական կերպարը վերհանելու եւ առաւել հանրաձայնազ դարձնելու՝ անոր ծնունդէն (1860) մինչեւ նահատակութիւն (1915): Գլուխները վերաբերուած են՝ «Ծնունդ, Աշխարհագրական Եւ Ընտանեկան Միջավայր», «Կ. Պոլսոյ Յեղափոխական Ծարժման Մէջ Գում Գաբուի Յոյցը», «Մեծն Մուրատ՝ Սասունի Ապստամբապետ», «Մուրատի Ձերբակալութիւնը, Աքսորը Եւ Փախուստը Աքսորավայրէն», «Մուրատի Արտասահմանեան Գործունէութիւնը», «Վերադարձ Դէպի Կ. Պոլիս», «Մուրատ՝ Օսմանեան Խորհրդարանի Անդամ», «ՄԻՂԿ Է. Համագումարը Եւ Քսան Կախաղանները», «Մուրատի Նահատակութիւնը»:

Ինչպէս կը պարզուի, ընթերցողին տրամադրուած է կենսապատմամբ առաւելաբար Սասնոյ Ա. Ապստամբութեան հետ առնչուած Մեծն Մուրատի, որ իր անջնջելի կնիքը թողած է ժամանակակիցներուն թէ՛ յետնորդ սերունդներուն վրայ՝ իր խիզախութեան, նկարագրային բնորոշ գիծերուն, ընկերային-քաղաքական հայեացքներուն եւ բոլորին հետ լեզու գտնելու հնարամտութեան պատճառներով:

Հատորին հեղինակը փաստերու տուեալներով երեւոյթ մը վերլուծելու առընթեր, յաճախ կը կատարէ մտորումներ. «Սասնոյ ապստամբութենէն ետք, ժողովուրդին աչքին Մուրատ կը դառնայ հայ ազգային-ազատագրական պայքարը խորհրդանշող հերոսը: Այդ պայքարին իրենց իսկական թէ յեղափոխական ծածկանուններով մէկէ աւելի անձնուրաց Մուրատներ մասնակցած են: Ժողովուրդը սովորաբար այդ Մուրատները իրարմէ գանազանած է անոնց ծննդավայրերով: Սակայն Հաճընցի Մուրատի պարագային նախընտրած է զայն տարբերել այլ

ձեւով՝ Մեծն Մուրատ: Միակ պատուանշանը՝ գոր Մուրատ երբեւիցէ ստացած է իր կեանքի ընթացքին» (էջ 68):

Միջին ընթերցողին համար մատչելի լեզուով գրուած եւ բազում ուշագրաւ մէջբերումներով յագեցած հատորին հետաքրքրական բաժիններէն է Մուրատի ձերբակալութիւնը, աքսորը, աքսորավայրէն փախուստը, բանտային տաժանելի պայմաններուն նկարագրումը (էջ 71-98): 5-րդ գլուխով՝ Մուրատի արտասահմանեան գործունէութեան յատկացուած (Փարիզ, Եգիպտոս, ԱՄՆ, Գանատա), հարազատօրէն կը նկարագրուի Մուրատի հետեւողական ջանքերը հայ յեղափոխական ուժերու միասնականութիւն ստեղծելու կապակցութեամբ, յատկապէս՝ ՀՅԴ-ի, վերակազմեալ Հնչակեաններու, ՄԻՂԿ-էն հեռացածներու եւ յուսալքեալներու հետ: Ան կոչերով, դասախօսութիւններով, հրապարակային ելոյթներով, նամակներով, հանդիպումներով կը փորձէ գոյացնել յեղափոխական ուժերու ճակատ մը, համախմբել գործօն եւ առողջ տարրերը: Այս առումով, կը հանդիպի խոչընդոտներու, յաճախ արհեստական, երբեմն՝ անտեղի խժեծանքներու: Իր շուրջ ստեղծուած Սասնոյ առասպելական հերոսի տիպարը ակնածանք կը պատճառէ ամէնուրեք. կ'ըլլայ խորհրդանշանը մը ժողովուրդային շրջանակներու աչքին: Եղիկ ձէրէճեան օրուան հայկական մամուլէն բազմաթիւ քաղուածքներ եւ ուշագրաւ վկայութիւններ կը կատարէ: Հետաքրքրական է ՀՅԴ-ի դիրքը՝ որ Մուրատի մեկնած եղբայրական ձեռքը կը մերժէ՝ մինչ երիտթուրքերու հետ կը լծուի համագործակցութեան: Ան կը գրէ. «Մուրատի համերաշխութեան կոչը, ՀՅԴ-ի ժխտական պատասխանը եւ նոյն պահուն գործակցութեան տրամադրութիւնը երիտթուրքերուն հետ, յաջորդող տարիներուն երկարօրէն կը քննարկուին եւ բանավէճերու նիւթ կ'ըլլան հայ մամուլին մէջ» (էջ 108):

6-րդ եւ 7-րդ գլուխները կը վերաբերին Մուրատի եւ Ստեփան Սապահ-Գիւլեանի Սոֆիայի ճամբով Պոլիս վերադարձին (1908) (օսմանեան սահմանադրութենէն ետք) եւ Մուրատի խորհրդարանական գործունէութեան որպէս օսմանեան առաջին խորհրդարանի

երեսփոխան (1908-1912): Ատանայի նահանգին Գոզան շրջանէն անքուէարկողներու մեծամասնութեամբ ընտրուած էր երեսփոխան: Հեղինակը պոլսահայ մամուլին միջոցաւ ընդարձակ տեղեկութիւններ կը հաղորդէ Խորհրդարանի օրակարգերուն, անոնց նկատմամբ հայոց դիրքորոշումներուն, Մուրատի կեցուածքներուն շուրջ: Հոս կը տեսնենք անոր քաղաքական գործունէութեան ոլորտը, համոզումները որպէս ընկերվարական, ժողովրդանուէր, յեղաշրջիչ եւ արդարամիտ գործիչ: Ան խիստ քննադատ է իթթիհատին եւ յետադիմական ուժերուն. իր յանդուգն որոշումները դրական համբաւ մը կ'ապահովէ Մուրատի: Բազմաթիւ հրատապ խնդիրներու շուրջ ան կը ցուցաբերէ քաղաքացիական գիտակցութիւն եւ համարձակութիւն, ինչպէս՝ հայոց օսմանեան բանակի ծառայութեան, Ատանայի 1909-ի ջարդերուն, գոյքերու եւ կալուածներու, տուրքերու, հանրային կրթութեան, աղջիկներու ամուսնութեան տարիքի, արհեստակցական ընկերութեանց, բանուորական իրաւունքներու, կաշառակերութեան, անպարկեշտ պաշտօնէութեան, դատարկապորտներու եւ այլն: Յիշարժան է անոր հնարամտութիւնը Ատանայի կոտորածին տեղեկագիրը ապահովելու անակնկալօրէն մահացած երեսփոխան Յակոբ Պապիկեանին գրասենեակէն, ինչ որ պատմական կարեւորագոյն փաստաթուղթ մըն է այդ կոտորածին մանրամասնութեանց շուրջ:

1914-ին կը կայանան երեսփոխանական նոր ընտրութիւններ: Մուրատի նկատմամբ նիւթուած խարդաւանքները պատճառ կ'ըլլան որ ան դուրս մնայ քաղաքական այդ ամպիոնէն: Սակայն ան կը շարունակէ ազգային-հասարակական եռուն գործունէութեամբ զբաղիլ:

8-րդ գլուխը Ս.Դ.Ջնչակեան Կուսակցութեան է. համագումարին, Հնչակեան Քսան Կախաղաններուն մասին է, նաեւ՝ Մուրատի կուսակցական գործունէութեան վերջին փուլին՝ մինչեւ 24 Ապրիլ 1915-ին սկսած ձերբակալութիւնները եւ աքսոր դէպի Այաջ:

Վերջին գլուխը սրտաճմլիկ եւ յուզիչ այն դրուագներն ու վկայութիւններն են, որոնք կը վերաբերին Մուրատի կեանքի վերջալոյսին, տառապանքներուն, սմարդի չարչարանքներուն կեսարիտոյ բանտին մէջ եւ կախաղանումին: Անհնար է հոգեխոյ տրա-

մադրութեամբ չկարդալ այս բաժինը, թէ ինչպիսի գազանային միջոցներով կեսարիտոյ հրապարակին վրայ կարողանուեցաւ երէկի լեկենտար հերոսն ու քաղաքական գործիչը: Ըստ Մուրատի միւս կենսագիրին՝ Սիրվարդի, Մուրատ կ'ըսէ. «Եթէ ցաւ մը ունիմ, այդ այն է՝ թէ ինչո՞ւ գէնք չի վերցուցինք, ապստամբութեան չի դիմեցինք, կուռի դաշտը չի նկատեալ... ինչ որ է, այս սեւ օրերը պիտի տեսնենք, մենք պատրաստ պիտի ըլլանք մարտիրոսուելու, որ հայը ապրի...» (էջ 232): Անոնք որոնք ակնատեսներն են եղած Մուրատի վերջին օրերու կտտանքներուն՝ ինչպիսի դառնութեամբ եւ յուզմունքով փոխանցած են իրենց գայրոյթն ու կակիծը: Կ'իմանանք նաեւ, թէ ինչպիսի գրողներ, գործիչներ, չէզոք գրիչներ բարձր գնահատած են Մուրատի դրական, բարեհամբոյն եւ արի նկարագիրը՝ Արփիար Արփիարեանէն մինչեւ Վահան Թէքէեան, Աւետիք Խահակեան, Բիւզանդ Քէչեան, Կարապետ Գաբրիէան, Երուանդ Օտեան եւ ուրիշներ:

«Որպէս վերջաբան»-ին մէջ Եղիկ ձէրէճեան կը գրէ. «Յեղափոխական եւ շրջահայեաց. հպարտ եւ «վհերոտ կարծուելու չափ համեստ». դեկավար եւ պարզ դիւնուր. համոզուած կուսակցական եւ համագործակցութեան ջերմ ջատագով: Մուրատ սիրուեցաւ եւ յարգուեցաւ բոլորէն: Իր գէնքի ընկերները պաշտամունքի համարող հաւատարմութիւն մը ունեցան անոր հանդէպ» (էջ 234):

Գիրքը ունի հազուադէպ լուսանկարներ Մուրատի կեանքէն, հատորին հետ առընչուած դէմքերու եւ այլն: Հեղինակը մեծապէս օգտուած է պատմագիտական գրականութենէ (հայ եւ օտար), բազմաթիւ հայկական թերթերէ, մամուլէ, արխիւներէ եւ փաստաթուղթերէ: Կարելի է ըսել որ սա Մուրատի ամբողջական կերպարը հարազատօրէն փոխանցող մատեն է՝ ընթերցելու արժանի: Նախապէս նման աշխատութիւն եղած է Սիրվարդի (Եղիա Գրիգորեան) կողմէ 1955-ին Փրովիտենա (ԱՄՆ), վերահրատարակուած 1991-ին՝ Երեւան:

Հատորի աւարտին կայ հեղինակին կենսագրութիւնը: Հատորը սրբագրած եւ խմբագրած է Եփրեմ Թոթեմեան (Թօրոնթօ, Գանատա):

Կը սպասենք «Հրասիրտները» մատենաշարի յաջորդ մենագրութեանց, որոնք նոր սերունդներուն պիտի փոխանցեն հայ ազգային ազատագրական պայքարի ճամբուն վրայ ինկած անգուգական նահատակներուն սիրանքները:

Վարձքը կատար ժրջան եւ պրպտուն հեղինակին:

ՎԵՐ. ՎԱՉԷ ԷՔՄԵՔՃԻԱՆԻ
«ԱՐՄԱՏՆԵՐՈՒ ՄՐՄՈՒՆՁՐ» ԶԱՏՈՐԸ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Կենսաբան այս եկեղեցակա-
նին ծանօթացալ Հալչպի մէջ
2000ական թուականներուն, երբ ան
Հայ Աւետարանական Նահատակաց
Եկեղեցւոյ սպասարկուն էր: Հայաս-
տանեաց Աւետարանական եկեղեց-
ւոյ այս նուիրեալը՝ Վեր. Վաչէ
էքմէքճեանը միշտ բազմաշխատ
գտայ: Հալչպի Հայ Աւետարանա-
կաններու Նահատակաց եկեղեցին,
երրորդ հաստատութիւնը այս հա-
մայնքին, բացի կիրակնօրեայ կրօ-
նական սպասարկումէ, յաճախ հան-
դէս կու գար ազգային դասախօ-
սութիւններով:



Պատուելին յաղթահարած է
հրատարակուած գիրքին բոլոր
դժուարութիւնները: Գործը հարս-
տացնելով ՆՃԱՆԿԱՐՈՎ մը ուրկէ
ննդի մտքերուն կը ժպտէին Արեւմտ-
եան Հայաստանէն ու Հայկական
Կրօնիկայէն Հայ Աւետարանական
եկեղեցիներ, դպրոցական աշակերտ-
ներով եւ «Նոր Այգ» մամուլի
նկարով հանդերձ: Ժամանակի
թուական տուեալներով հարուստ
գիրք մըն է Պատուելին մեզի
մատուցածը: Սկիզբը հակիրճ՝

Հայաստանեաց Աւետարանա-
կան եկեղեցիի կազմակերպման մա-
սին, միսիոնարաց եւ Հայց Աւետ.
եկեղեցիին դպրոցավարութեան մա-
սին, վեցեակ մը գոյէճներ հիմնե-
լու եւ մշակոյթի գործը ղեկավա-
րելու մասին:

Գիրքին խորագիրն անգամ
փշաքաղիչ է եւ բազմախօս՝ հակա-
ռակ Մրմունջը ըլլալուն:


Ձօնով մը հատորը նուիր-
ուած - Ապրիլ 13-14, 1909ին Ատա-
նայի, Սայ-Կեչիտի, Չայր Աղազի
եւ Օսմանիէի մէջ իրենց հաւատքի
եւ ինքնութեան համար նահատակ-
ուած հոգիներուն եւ աշխարհա-
կան առաջնորդներուն: Բազմա-
տասնեակ եղած է այդ նահատակ-
ներուն թիւը մանաւանդ Օսմանի-
էի մէջ: Հատորին հրատարակու-
թեան մասին «Երկու խօսք» ունի
ծանօթ անուն մը՝ Միհրան ձիգմէճ-
եան, որ գրած է. «Հայոց Յեղաս-
պանութեան 100 ամեակի եւ Հայց
Աւետարանական Եկեղեցւոյ 170 ամ-
եակի զուգահեռ առիթներով հրա-
տարակուած այս գիրքը, վստահա-
բար իր օգտակար ներդրումը պի-
տի ունենայ մեր պահանջատիրա-
կան աշխատանքին վրայ»:

Իսկ հեղինակը, որ գրած է այս
գիրքին յառաջաբանը, կ'ըսէ. 2008
Մայիսին, առաջին անգամ ըլլալով
այցեկեցի Արեւմտեան Հայաստանի
եւ Կրօնիկոյ պատմական հողերը:
Եթէ օրերու տեւողութեան, բո-
լոր այդ անունները, որոնք ապրած
էին իմ երգերուս, գրականութեան
էջերուն, մեծ մօրս արցունքոտ յու-
շերուն մէջ, դարձած էին իրակա-
նութիւն: Ամէն մէկ քայլափոխի
ականատես կ'ըլլայի մեր կրօնական
եւ մշակոյթի հարստութիւններուն,
որոնք կենդանի վկաներն էին այդ
հողերու իսկական տէրերուն:

Վերադարձած էի ծննդավայրս՝
Հալչպ սակայն հոգիս հոն էր,
պատմական հողերու մէջ կարծես
թէ տակաւին բան մը կը փնտնէր:
Իր Արմատներու մըմունջներուն ու
կանչերուն ականջալուր կ'ըլլար...»:

Այսքանը բաւարար էր հասկ-
նալու համար հոգեվիճակը երկիր
այցելող Պատուելին:

Այնուհետեւ Այնթապի գոյգ եւ
աւելի Հայ Աւետարանական եկեղե-
ցիներու մասին է խօսքը, հաստա-



տելով հայերուն թիւին մեծ ըլլալը
եւ հրէշ Սուլթանին 1895-1896
թուականներու խժոճութիւններէն
ետք «Ատանայի ու շրջաններու
ջարդը (որ դաս մը չեղաւ, չկրցանք
նախատեսել 1915թ. ու դարձանք
Սփիւռք»՝ հարիւր հազարներով:

Լուրջ խօսք կայ անշուշտ նա-
հատակ վերապատուելի առաջնորդ-
ներու կենսագրութեան ու մերթ
խիզախ կեցուածքներու մասին:

Ահա Պիթիասի Հայ Աւետա-
րանական եկեղեցւոյ շինքը կա-
ռուցուած 1881ի, որ այսօր վերած-
ուած է մզկիթի: Հոս կը յիշուին
ծանօթ անուններ - Բենճիլեան, Շե-
պեթճեան, Ֆիլեան, Քիւզէսեան: Սե-
րունդները հասած են մեր օրերուն:
Իրաւացիօրէն արձանագրուած
է Մուսա Լեւոն ժողովուրդին
առաջնորդներէն Վեր.

Տիգրան Անդրէասեան հերո-
սին անունը, որուն դրացնութիւնը
անձամբ վայելած էի Հալչպի
Տառտիէ թաղամասին մէջ եւ դա-
սերները եղած էրոսին Արամ անուն
տղուն «Ալէփօ Գոյէճ»ին մէջ:

Ահա Տիգրայէքըրի Հայ Աւետ.
Սբ. փրկիչ եկեղեցիին շինքը. քա-
ղաք ուր կ'ապրէին 35,000 հայեր:
Հեղինակը կու տայ մանրամասնու-
թիւններ Վեր. Թովմաս Պոյաճեա-
նի, Վեր. Թովմաս Մկրտիչեանի եւ
այլոց ղիրքորոշման շուրջ:

Պատմական խօսք կայ Իսթան-
պուլի Հայ Աւետարանական եկեղե-
ցիներու մասին, թիւով հինգ, եր-
կուքը մինչեւ այսօր գործող օրինակ
տալով Խասգիւղի եւ Սկիւտարի
երբեմնի եկեղեցիները: Առանց մոռ-
նալու Կետիք փաշայի հողաչին եկե-
ղեցին, ուր յիշատակելի եղած է Վեր.
Կարապետ Յովհաննիսեանի դերը:

Այսօր, Կետիք փաշայի եկե-
ղեցիին մէջ, Կիրակի օրեր չորս
լեզուներով պաշտամունքներ տողի
կ'ունենան (Թուրքերէն, Մուսուլե-
րէն, Արեւելահայերէն եւ Պարսկե-
րէն, եկեղեցիին ներքնայարկին մէջ
կը գործէ Հայաստանցի ընտանիք-
ներու մանուկներու համար առօր-
եայ վարժարան մը ուր կը յաճախեն
շուրջ վաթսուս մանուկներ (ընտա-
նիքներու, որոնց զաւակները չեն
ընդունուած քաղաքի այլ Հայ վար-
ժարաններու մէջ, եկեղեցին նաեւ
դատական միջոցառումներով կը
հետապնդէ գրաւեալ կալուածնե-
րուն վերադարձման հարցերը:

Նման հաստատումներով հա-
րուստ է Պատուելին այս գործը:

Հոն կը գտնենք նաեւ Ինճիր
Տիպի Աւետարանական վարժարա-
նին քառայարկ շինքը, Ինճիր Տիպի
համանուն փողոցին վրայ: Այս վար-
ժարանները իր բազմաթիւ աշակերտ-
ներով ջամբած է ազգային կրթու-
թիւն, ինքնութեամբ հանդերձ:

Հոս ունինք խմբանկար մը
դասարանի աշակերտները ներկա-

յացնող դպրոցական տարիէն: Զա-
նացինք համբել թիւը՝ քանի հոգի:
Ահաւասիկ Մեդրէի (Խարբերդ
Հայ Աւետարանական եկեղեցւոյ շին-
քը, եւ քաղաքի

Աստուածաբանական ճեմարա-
նը, որ ապա «Եփրատ Գոյէճ»
կոչուեցաւ, տալով բազմաթիւ շրջա-
նաւարտներ: Ժժ. դարու կէսերուն
Խարբերդ քաղաքը ունէր Հայ բնակ-
չութիւն: Գոյէճին ուսուցիչները կը
բանտարկուէին»: Յուլիս ամսուան,
քունելով դէպի Տէր Ջօր, որ կը
նշանակէր ստոյգ մահ:

Գրքը գիտանք, որ ճահճային
էր, Մալարիայի կեդրոն, ճահճներ-
ը կը չորցուին, գիւղը կը դառնայ
օղափոխութեան եւ առեւտուրի
կեդրոն: Հոս եւս Հայ Աւետարա-
կաններ հիմնած են եկեղեցի ու
դպրոց: Հայութեան թիւը հոս հա-
սած է մեծ թուի: Կանգուն է
եկեղեցւոյ շինքը ու վերածուած՝
գրադարանի:

Ահա կը գտնենք Գոնիայի
ձենանեան Գոյէճի շինքերէն մին:
Քաղաքի Հայ բնակչութեան թիւը
60,000 կը հասնէր: Ընծարանը ու-
նեցած է համալսարանաւարտ փայ-
լուն դասախօսներ փրօֆ. Արմենակ
Հայկազեանի նման:

Հեղինակը ներկայացուցած է
նաեւ Մարգոլանի Ամերիկեան Գո-
լէճը ու Հայ Աւետարանական եկե-
ղեցին, որ հիմնուած է 1853ին: Հոս,
Հայ Աւետարանականներ հիմնած
են նախակրթարան մը 1860ին որ
ունեցած է 90 աշակերտ: Մեծ
նուիրեալներու թիւը մշակոյթի
ճակատին վրայ:

Թերագնահատել այսքան
նուիրում ու աշխատանք հողի մը
վրայ ուր իշխողը՝ Չարդարար
Օսմանցին էր: Ի գուր չէ որ հայերը
Արեւելքի Չահակիբը կրած են, եւ
այս գործին մէջ քիչ չէ եղած Հայ
Աւետարանականներու բաժինը
յատկապէս դպրոցաշինութեան պա-
րագային:

Պատուելին իրաւունք ունէր
չեչտելու Ուրֆայի մէջ Հայ Աւետ.
անսպառ գործունէութիւնը, որպէս
եկեղեցի ու դպրոց կառուցողներ
երբ 1915 թ. Ուրֆայի մէջ Հայոց
թիւը 30,000 էր: Կը յիշուին համա-
լսարանաւարտ վերապատուելիներ-
ու անուններ:

Բազմաթիւ նուիրեալներ կը
ջարդուին:

Հայ Աւետարանական միաց-
եալ վարժարանը Ուրֆայի մէջ
ունեցած է 1370 աշակերտ: Աւս
բոլոր թուումները խորհրդածու-
թիւններու կը մղեն ընթերցողը
խորաչափելու համար տարուած
աշխատանքին արժէքը:

Չէ մոռցուած Կարմուճի Աւետ.
եկեղեցին, գիւղ ուր Ուրֆայի միայն
10 քմ. հեռու էր: Չեն մոռցուած
Վեր. Պետրոս Մատարեանն ու Վեր.
Սողոմոն Աբբեղիանը:

Չինացադարէն յետոյ երեք
հազար Հայ ուրֆայցիներ կը վերա-
դառնան Ուրֆա լծուելով շինա-
րար աշխատանքի, որ այս անգամ
կը կասեցուի Քեմալական շարժու-
մի կողմէ: Ուրֆան յայտնի կը
դառնայ իր հերոսամարտով: Ուր-
ֆայի վերջին Հայն ալ կը մահանայ
բայց 129 ամեայ եկեղեցին այսօր
կանգուն է, վերածուած մզկիթի:

Հայ Աւետ. հոգիներու Չարդը
տեղի ունեցած է թիւով 27 հոգի 13-
14 Ապրիլ, 1909ին Ատանայի, Սայ-
Կեչիտի, Օսմանիէի եւ Չայր Աղա-
զի մէջ: Նման դէպքեր կրկնուած են
Օսմանեան տիրապետութեան տակ
գտնուող Բուվանդակ Արեւմտահա-
յաստանի մէջ:

Օսմանեան Իշխանութեան

ԵՐԿՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐՐԱԼՈՒԾԱՐԱՆՆԵՐ ԲԱՑՈՒԵՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ



Քալիֆորնիոյ Լոս Անճելլըս քաղաքին մէջ հիմնադրուած Անուշաւան Աբրահամեան Կրթական Հիմնադրամը հաւատարիմ մնաց իր առաքելութեան եւ մէկ անգամ եւս քայլ կատարեց Հայաստանի շրջաններու երիտասարդութեան խոստումնալից ապագայի կերտման ճանապարհով: Այս նոր նախաձեռնութեան իրականացմամբ հասանելի դարձան այնպիսի արհեստներու եւ մասնագիտութիւններու ուսումնառութիւնը, որոնց շնորհիւ պատանիները կարելիութիւնը կ'ունենան լաւ աշխատանք ունենալ ապագային՝ չհեռանալով հայրենի քաղաքներէն ու գիւղերէն: Անուշաւան Աբրահամեան Կրթական Հիմնադրամի նախաձեռնութեամբ եւ ինֆորմացիոն Տեխնոլոգիաներու Ձեռնարկութիւններու Միութեան (ԻՏՁՄ) հետ համագործակցութեան որպէս արդիւնք՝ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան երկու ուսումնական հաստատութիւններէն ներս հանդիսաւոր արարողութեամբ բացուեցան ճարտարապետական տարրալուծարաններ: Հաշուի առնելով այն փաստը, որ այս ծրագիրին միջոցով աշակերտները հնարաւորութիւն կը ստանան ուսումնասիրել համակարգչային ծրագրաւորումը, եռաչափ տպագրութիւնը, ռոպոթաշինութեան ծրագրաւորումը, ստեղծումն ու կառավարումը՝ այսպիսով նոր դուռ բացուեցաւ դէպի հանրակրթական ուսումնական ծրագրին մէջ չներառուած նոր ոլորտներ: Այս մասնագիտութիւնները աշխատանք ունենալու նոր հնարաւորութիւններ կը ստեղծեն, քանի որ ՏՏ ոլորտը նոր մասնագէտներու մեծ պահանջարկ ունի: Այսպիսով՝ ԱԱԿՀ-ն անչափ գնահատելի այս նախաձեռնութեան համար՝ արժանացաւ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան բարձր գնահատանքին: Իր աջակցութիւնը ցուցաբերելու համար նաեւ այն ուրախութեամբ ստանձնեց նորաբաց տարրալուծարանները բարձր որակաւորմամբ դասախօսներով ապահովելու պարտաւորութիւնը:

Առաջին ճարտարապետական տարրալուծարանը՝ յազեցած եօթ համակարգիչներով, եռաչափ տպիչով, շաղափային հաստոցով եւ ռոպոթաշինութեան հաւաքածուով, բացուեցաւ Արմաւիրի ինտուստրիալ Մանկավարժական Պետական Գոյէճին մէջ: Բացման արարողութեան ներկայ էին Արմաւիրի մարզպետարանի բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք եւս կրթութեան ոլորտէն ներս ներդրած բարձր

աւանդի համար շնորհակալական պատուոյ գիր յանձնեցին ամերիկացիները: **Շար.ը էջ 19**

ՀԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

PanArmenian TV-ն եւ Global Arts International-ը կը ներկայացնեն տարուան կարեւորագոյն մշակութային իրադարձութիւնը՝ Pan Armenian Entertainment Awards 2016 -ը Լոս Անճելլըսի մէջ գործող սփիւռքի խոշորագոյն հայկական պատկերասփիւռի կայանը՝ PanArmenian TV -ն եւ սփիւռքի մէջ տեղի ունեցող հայկական միջոցառումներ կազմակերպող խոշորագոյն ընկերութիւնը՝ Global Arts International -ը կը միաւորուին՝ մեկնարկը տալու նախադէպը չունեցող մշակութային հրաշալուստեան ողջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու տարածքին: Ծագ, ռոք, փոփ եւ այլ սիրուած ժանրեր, թատերական բացառիկ ներկայացումներ, մէկը միւսին զերազանցող խոշորմշտաբ համերգներ ու մշակութային նորոյթներ՝ նախատեսուած յատուկ Ամերիկայի Միացեալ Նահանգներու հայ հան-



դիսատեսին համար: Այս համագործակցութեան առաջին պտուղը Pan Armenian

Շար.ը էջ 19



Ընկերային Խրախնճանք

95

Հ.Մ.Մ.ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ

- ամեակին առթիւ

Կազմակերպութեամբ՝
Փասատինայի Հ.Մ.Մ.-ի Վարչութեան
Երեկոն կը խանդավառէ՝
Աննօ Մկրտչեան

Ուրբաթ, 26 Օգոստոս, 2016
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
Հ.Կ.Բ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Մուտքի Նուէր՝ \$35.00
ՏՈՄՍԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԳԻՄԵԼ՝ (626)354-5924 կամ (818)384-2987



ՈՐՍՈՐԴ ԸՆԿԵՐՆԵՐ ԶՈՐ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Որսորդ մարդիկ հաճոյք են ստանում հրաշք բնութեան գրկում գբօսնելուց եւ որս անելուց: Անցեալում իշխանական տներէ գուարձալի գբօսանք էր նկատուած: Գրիգոր Լուսաւորչի հայր Անակը Արշակունեաց Խոսրով Գ. թագաւորին որսարշաւի ժամանակ սպանեց: Ամէն մարդու բան չէ որսորդութիւնը, հատ ու կենտ մարդիկ են որսորդութեամբ գբաղւում, խղճի եւ գուժի հարց է:

Մեր լսածի համապատասխան երկու որսորդ ընկերներ՝ Մարտիրոս* եւ Սիմոն* ծրագրուած որոշումով որսի են գնում Մագանդաւանի անտառախիտ Նեքա կոչող տեղամասը վարագ որսալու համար, սա իրենց առաջին անգամը չէր, յաճախ միասին որսի էին գնում եւ գոհ ու գոհունակ տուն վերադառնում:

Երկու որսի ընկերներ էին՝ Մարտիրոսը տարիքով մեծ, իսկ Սիմոնը երիտասարդ հմուտ կրակող: Մեր հայ որսորդները առաւել վարագ են որսում, վարագի աճը շատ է եւ որսի արտօնութիւնը դիւրին: Պարսիկ որսորդը կարելի է նոյնպէս վարագի որս անի, բայց թէ՛ խոզի եւ թէ՛ վարագի միսը պիտի է համարուում, չեն ուտում իրենց Ղուրան կրօնագրքի պատուէրի համաձայն: Ըստ էջ. Աղայեան բառարանի՝ «Վարագի պատկերը՝ Մասանեանների արքայական դրոշմն էր»:

Եղանակը ձմեռ էր, սար ու ձոր ձիւնով ծածկուած: Առաւելաբար աշնան եւ ձմռան եղանակին է արտօնուում որսորդութիւնը: Երկու որսորդ ընկերները ինչ յոյսերով ու ցանկութիւններով ուրախ ու գուարթ ճամբայ էին ընկել Ս. Մննդեան նախօրեակին որսի մտով սեղանը ճոխացնելու նաեւ հարագատի ու բարեկամի համար բաժին հանելու նպատակով, սակայն անգիտակ էին վրայ համող ճակատագրի դառն ու կսկծալի խաղերից:

Նրանք կազմ ու պատրաստ

մխրճուում են անտառի խորքերը, որսի հրացանը Սիմոնն էր կրում: Երկինքը մուգլ ամպով էր ծածկուած աչքի հորիզոնը կարծ: Մարտիրոսը հեռադիտակով տեսադաշտն է ստուգում եւ ուրախութեամբ յայտնում Սիմոնին.

-էն հեռուն մի քանի վարագներ եմ նկատում, թերեւս սխալուում եմ, բայց առ հեռադիտակով ստուգիր:

Սիմոնը հեռադիտակով նայելիս հաստատում է ընկերոջ նկատածը.

-Հա՛, ճիշտ ես ասում, բայց յայտնի չէ նրանց քանակը, ինչ անենք լաւ է:

-Իմ կարծիքով մենք գուզահեռ տարածութեամբ գնանք առաջ առանց իրար կորցնելով, ես նրանց կը քշեմ դէպի քո կողմը, դու էլ յարմար պահին կը կրակես:

Ահա նրանք ծառերի միջով սուս ու փուս ճանապարհ են ընկնում շատ զգուշ ու զգօն չլինի յանկարծ ճիւղերի խշրտոց կամ ոտքի դրմբոց վարագներին խրտնեցնի: Նրանք այդ սառնամանիքում տաք հագուստով ու երկարաճիտ սապոգներով ապահոված աշխուժ ու եռանդուն շարունակում են ճանապարհը: Նրանք մենակ էին, ոգեւորուած նպատակաւոր վարագների գոյութեամբ, որ կը որսան եւ ուրախ ու հպարտ, լիքը ձեռքով տուն կը վերադառնան: Յաճոր ու բարձր ճամբան խիտ ծառերով պատճառ դարձաւ, որ նրանք այլեւս իրար չտեսնեն, կանչ էլ չէին կարող բարձրացնել, քանի որ ձայն լսելիս որսը կը փախչէր:

Մարտիրոսը վարագներին զգալի չդարձնելու իր ներկայութիւնը նրանց դէպի ընկերոջ կողմը քշած լինելու նպատակով իբր իրեն նմանեցնում է վարագի, այսպէս վերարկուով գլուխը ծածկում է. ձայնը նմանակելով խոթիւթոցով նրանց առաջ է քշում, էն հեռուից Սիմոնը մշուշապատ դիմացը մարդ չի նկատում, այլ վարագ է տեսնում ծառերի մէջից առաջանալիս, ան-

միջապէս նշանաւորութիւն է կատարում եւ ձգում է ձգանը ու իբր թէ որսին գետին տապալեց, ուրախացած վազում է դէպի որսը երկար ճամբայ կտրելով, երբ հասնում է որսին ինչ տեսնի ընկերոջ փոռած արնաթաթախ մարմինը, լեզուն կապ է գալիս, գոյնը սփրթնում է, ոտքերը թուլանում են, հագիւ իրեն զսպում է կործանուելուց ծունկերով գետնին ընկնելով տապալուած ընկերոջ մարմնի մօտ, ձեռքերը պարզում են դէպի նրա գլուխը եւ ինչ, գլուխը արեան հեղեղով պատած, ծայր է առնում լաց ու կոծը, ողբն ու կականը, գլխին հարուածներ տալով, վա՛յ, վա՛յ ձայն բարձրացնելով.

-էս ինչ արեցի Տէր Աստուած, էս ինչ արեցի, անիծուեմ ե՛ս, մենակ էս անտառում ինչ պիտի անեմ ե՛ս, վա՛յ, մարդ եմ սպանել, ընկերոջս եմ սպանել, էս ինչ կը լինի իմ վիճակը:

Լացի աղմուկն ու աղաղակը տարածուել էր շուրջ բոլորը, խոտ ու թուփ, տերեւ ու ծառ եւ կենդանիներ ամբողջ հետեւում էին նրա լաց ու կոծին, գոռում-գոչումին: Մոլորուածի պէս շուրջն էր պտտում փամփուշտ կերած կենդանու պէս. -վա՛յ, վա՛յ ասելով, աղեկտուր բղաւոցներ արձակելով: Վերջապէս այդ աղէտալի վիճակից նա սթափուում է, ընկերոջ մարմինն ուսին առնելով ճամբայ է ընկնում վազելով, ուժ ու հնարգիտ եռապատկած դէպի առաջ է սլանում, կարծում էր նրա մարմնին կենդանութիւն կը տայ, յոյսն էր նրան առաջ մղում, դար ու փոս կտրելով հասնում է ինքնաշարժին, հեռա-

խօսով ոստիկանութեան իմաց է տալիս, նրանք անմիջապէս հասնում են, Սիմոնը տեղեկացնում է.

-Շատ ցաւալի դէպք է պատահել, մարդու վրայ եմ կրակել, որսորդ ընկերոջս եմ սպանել, սխալութիւն է եղել, սխալութիւնն, ոչ դիտաւորեալ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ, էս ինչ կը լինի իմ վիճակը:

Մարտիրոսին տարան հիւանդանոց, իսկ Սիմոնին ոստիկանատուն:

Դատարանը երկար դատավարութիւնից յետոյ սպանութիւնը նկատում է պատահար, իսկ հանգուցեալի ընտանիքը չէր համաձայնուում այդ որոշման հետ, որի պատճառով մի քանի տարի դատ ու դատաստան գնաց:

Վերջապէս ընտանիքը համոզուում է դրամական յատկացումով վերջ տալ դատական քաշքշուկին: Սիմոնը վճարում է պահանջուած գումարը, ազատուում է դատական հետապնդումներից արտօնուելով երկրից դուրս գալ. բայց ինչ ազատութիւն, դա մոռացուելիք դէպք է, նա շարունակ մտքում պիտի կրի ընկերոջ արիւնլուայ դիակի ուրուականը անհանգստանալով:

Ահա այսպէս անգուշութեան եւ ոչ դիտաւորեալ սխալմունքներով աղէտալի դէպքեր են պատահում եւ ընտանիքներ դառնում սգաւոր: Սրանք բացասական եւ դատապարտելի երեւոյթներ են, որ կարելի է իւրաքանչիւր մարդու կեանքում պատահել: Ուշադրութիւնն ու զգօնութիւնը տարբեր գործերում անհրաժեշտօրէն կարիք է, յետագային չղջալու եւ մղձաւանջի մէջ չընկնելու համար:

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Կիլիկեան Բարեգործական Միութեան Վարչութիւնը շուտափոյթ ապաքինում կը մաղթէ վարչութեանս ատենապետ ձորճ Մատոյեանին, որ այս օրերուն կը գտնուի բժիշկներու հսկողութեան տակ:

Լիալոյս ենք որ մեր սիրելի ատենապետը մօտ օրէն կը տեսնենք մեր մէջ, որպէսզի շարունակէ իր ազգասիրական գործունէութիւնը ու իր մտքի ու կեանքին հետ ամբօրէն խարսխուած Հալէպի Կիլիկեան վարժարանը գոյատեւէ ու յարատեւէ լուսաւորելով Հալէպահայ մանուկներու մտքերն ու հոգիները:

Կիլիկեան Բարեգործական Միութեան Վարչութիւն

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԻԱՆ ՓԱՌԱՏՕՆ

Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԿԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

SUNDAY SEPTEMBER 18, 2016

VERDUGO PARK GLENDALE 1621 Canada Blvd., Glendale, CA, 91206 Starting at 11:00 am

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ - ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ - ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ - ՀԱՄԱԴԱՍ ՃԱՇԵՐ

Live Music - Dancing - Art Work Exhibition - Kids Games - Armenian Food

GENERAL SPONSOR
INNOVATIVE Designs Manufacturing, Inc.
By TED & NORA KOROGHLIAN

To reserve your vendor booth please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար Հեռաձայնե՛ք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938

ՎԵՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ ԵՒ ԿԱՊՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Եթէ կը կասկածիք՝ արդեօք իսկապէս կը սիրէք ձեր ընտրեալը, թէ կապուածութիւն կը զգաք անոր նկատմամբ, ուրեմն ուշադիր կարդացէք այս վեց կէտերը: Անոնք կ'օգնեն ստանալու ձեզ տանջող հարցին պատասխանը:

-Սէրը կիրք է, իսկ կապուածութիւնը՝ անտարբերութիւն:

Այստեղ խօսքը բաժանման ժամանակ գոյգերու պահուածքին մասին է:

Կ'ըսեն՝ սիրելէն ատելութիւն մէկ քայլ է, ուստի, սիրող գոյգերու պարագային բաժանման ժամանակ սիրոյ գեղեցիկ զգացումը կը վերածուի ատելութեան: Իսկ եթէ գոյգերու միջեւ կապուածութիւն է, ուրեմն բաժնուելու պահուն անոնք անտարբեր պիտի ըլլան եւ անգամ չզայրանան:

-Սէրը անվերապահ է, իսկ կապուածութիւնը՝ եսասիրական. Սիրող գոյգերը անվերապահօրէն կը նուիրուին իրարու: Զոյգերէն ամէն մէկուն համար միւսին պահանջներն ու ցանկութիւնները սեփականէն վեր կը դասուին: Իսկ կապուածութեան ժամանակ գոյգերը եսասիրական մօտեցում կը ցուցաբերեն իրարու հանդէպ:

-Սէրը բարդ է, իսկ կապուածութիւնը բարդ է, երբ միասին էք. Իրական սիրոյ պարագային ամէն ինչ շատ դժուար է: Կը թուի՝ ամէն ինչ պէտք է գեղեցիկ ու պարզ ըլլայ, բայց կեանքը իր օրէնքները կը թելադրէ, եւ սիրող գոյգերը պէտք է մշտապէս պայքարին իրարու կողքին ըլլալու համար: Իսկ կապուածութեան պարագային գոյգերը պարզապէս կը մտածեն, թէ շաբաթը քանի անգամ պիտի հանդիպին: Այս պարագային յարաբե-

րութիւնները չեն զարգանար եւ թմրանիւթի նման՝ ազդեցութիւնը վաղ թէ ուշ կ'անցնի:

-Սէրը ազատութիւն է, իսկ կապուածութիւնը՝ բանտարկութիւն. Երբ դուք կը սիրէք, չէք մտածեր սիրած հակը մշտապէս ձեր տեսողաշտին մէջ պահելու մասին: Պէտք չկայ զգացումները հասկնալու համար ամէն վայրկեան իրարու հետ ըլլալ:

Իսկ երբ գոյգերը կապուած են իրարու, իրական սիրոյ զգացում չկայ, քանի որ անոնք այդ սէրը կը զգան միայն իրարու ներկայութեան պարագային:

-Սէրը կ'ընդլայնէ սահմանները, իսկ կապուածութիւնը՝ կը սահմանափակէ: Իրական սէրէն բացի, ոչինչ այս աշխարհի վրայ չի կրնար ամենագորութեան զգացում յառաջացնել գոյգերուն մօտ: Սէրը նոր շունչ եւ ուժ կու տայ ձեզի, եւ դուք պատրաստ էք գրաւելու ամբողջ աշխարհը:

Իսկ կապուածութեան պարագային սէրը կը վերածուի իշխանութեան համար պայքարի: Զոյգերէն ամէն մէկը կ'ուզէ հաւաստիանալ, որ յարաբերութիւններու «ղեկ»-ը իր ձեռքն է:

-Սէրը յաւերժ է, իսկ կապուածութիւնը՝ ժամանակաւոր. Երբ դուք իսկապէս կը սիրէք, ուրեմն ձեր սէրը յաւերժ է: Նոյնիսկ եթէ յարաբերութիւնները այլ ընթացք կը ստանան, եւ գոյգը կը բաժնուի, միեւնոյնն է, ան կը մնայ ձեր կեանքի միակ սէրը: Իսկ կապուածութեան պարագային գոյգերը նման զգացումներ չեն ապրիր: Անոնց կապուածութիւնը ժամանակաւոր է, իսկ յարաբերութիւնները՝ կեդծ:

3 ՀԻՄՆԱԿՈՐ ՊԱՏՃԱՌ՝ ԶԿԱՆ ԻՒՂՈՒ ԱՇՆԱՆ ԵՒ ԶՄՐԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԶԱՄԱՐ

Հիւանդութենէ ամենալաւ պաշտպանութիւնը ժամանակ առ ժամանակ առողջութեան հետեւիլն է: Բայց, չեն գիտեր ինչու, մարդոց մեծ մասը իր առողջութեան մասին կը չի զննէ միայն, երբ ցուրտ է, եւ կը սկսի վարակիչ հիւանդութիւններու շրջանը: Երբ կը նկատես, որ հանրակառքերը լեցուն են փոշտացող եւ հազացող մարդոցով, յանկարծ կը հասկնաս, որ մարմինը պէտք է պաշտպանել հիւանդութիւններէն: Լաւագոյնը, ինչ որ կարելի է առաջարկել այդ պարագային, ձկան իւղն է:

Ձկան իւղի բաղադրութեան մէջ կը մտնեն մեծ քանակութեամբ վիթամիններ, հանքանիւթեր եւ օմեկա-3 թթուներ, որոնք անհրաժեշտ են մարմնին՝ անոր լիարժէք աշխատանքին համար: Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան տուեալներով՝ ձկան իւղի պարբերաբար օգտագործումը կը նուազեցնէ սրտի կաթուածի, ինչպէս նաեւ սիրտ-անոթային հիւանդութիւններու յառաջացումը:

Ապացուցուած է, որ ձկան իւղի պարբերաբար օգտագործումը դրականօրէն կ'ազդէ դիմադրողական համակարգին վրայ: Ըստ որոշ հետազոտութիւններու՝ օմեկա-3 թթուները զգալիօրէն կը նուազեցնեն քաղցկեղի յառաջացման հաւանականութիւնը:

Ձկան իւղը կը կայունացնէ զարկերակային ճնշումը:

Ձայն կը նշանակեն թոքախտի, ուխտի, անեմիայի պարագային:

Խորհուրդ կը տրուի դաշտանի ցաւի, յղութեան բարդութիւններու պարագային:

Կ'արտօմուի օգտագործել ճարպակալման, շաքարախտի, օսդէոփորոզի, փսորիակի պարագային: Դրական ազդեցութիւն կ'ունենայ շրջանի համակարգին վրայ:

ԵՐԿԱՐԱՏԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Մտածած էք բնաւ, թէ ինչո՞ւ որոշ գոյգերու սէրը տարիներու ընթացքին աւելի կ'ամրապնդուի, իսկ ուրիշներ յաճախակի տարածայնութիւններ կ'ունենան: Որոնք են երկարատեւ յարաբերութիւններու գաղտնիքները.

1. Հաւատարմութիւն. Իրական յարաբերութիւններու հիմքը հաւատարմութիւնն է, որ ամուսնութեան եւ սիրոյ գրաւականն է: Հաւատարմ մարդոց համար փոխադարձ վստահութիւնն ու նուիրուածութիւնը աւելի կարեւոր է, քան տարածայնութիւններն ու նման այլ մանրուքները:

2. Շփում. Երկարատեւ յարաբերութիւններ հաստատելու հարցով շփումը մեծ դեր ունի: Պէտք է մոռնալ բոլոր տեսակի էլէկտրոնային սարքերու մասին եւ հան-

գիստ խօսակցիլ: Անկեղծ շփումը յարաբերութիւններու մէջ վստահութեան եւ երջանկութեան հիմքն է: Եթէ շփում չկայ, գոյգերը չեն կրնար երկար ապրիլ իրարու հետ:

3. Կայունութիւն. Արիստոտէլ ըսած է. «Մենք մեր մշտապէս կատարուող գործերն ենք: Ուստի, կատարելութիւնը ոչ թէ գործողութիւն, այլ՝ սովորութիւն է»: Ծիշող եւ երկարատեւ յարաբերութիւններու գաղտնիքը կայունութիւնն է: Եթէ ամուսինները իրենց գուզնկերով հետաքրքրութիւնները սեփականէն վեր կը դասեն եւ կը փորձեն իրենց ներդրումը ունենալ յարաբերութիւններու կայունութեան մէջ, ուրեմն անոնց սէրը յարատեւ պիտի ըլլայ եւ ժամանակի ընթացքին անիկա միայն պիտի ամրապնդուի:

ՈՍԿԷ ԿԱՆՈՆՆԵՐ ԿԻՆԵՐՈՒ՝ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԶԱՄԱՐ

Ձեր ամուսինի ներկայութեան միշտ պահպանեցէք հիանալի տրամադրութիւն, ժպտացէք եւ ծիծաղեցէք, յատկապէս, երբ ան կը սրամտէ:

Ձգտեցէք դառնալ աւելի մաքրասէր, աւելի հաւաք: Փնթիութեան ու թափթփածութեան պատճառով ձեր ամուսինը կրնայ հեռանալ ձեզմէ:

Աշխատեցէք ըլլալ աւելի կանացի: Յաճախ օգնութեան դիմե-

ցէք հայելիին: Ձեր ամուսինին համար եղէք քուրթիգանուհի, իսկ մնացեալ բոլորի՝ ազնիւ եւ անհասանելի:

Հագուելու ժամանակ հաշուի առէք ոչ միայն ձեր շրջապատին, այլեւ՝ առաջին հերթին՝ ձեր ամուսինին ճաշակը: Հետաքրքրեցէք ձեր ամուսինին գործով, մասնագիտութեամբ՝ ընդգծելով, որ ամէնէն կարեւորը կը համարէք անոր գործը:

ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԸՆԵԼ ՉՏԻՐԵԼՈՒ ԶԱՄԱՐ

Կ'ուզէ՞ք ամէն օր լաւ տրամադրութիւն ունենալ: Շատ դիւրին է, պէտք է հետեւիլ հետեւեալ խորհուրդներուն.

- 1) Քննադատ պահուել մտածեցէք միայն լաւ բաներու մասին: Այդ պարագային դուք պիտի կարենաք լաւ տրամադրութեամբ քննալ, եւ յաջորդ օրը անցնել դրական մթնոլորտի մէջ:
- 2) Մի՛ կեղերոնանաք այն

ամէնուն վրայ, որոնք կը փճացնեն ձեր տրամադրութիւնը, բայց ոչ մէկ ձեռով կարելի է փոխել:

3) Ծրագրեցէք որեւէ հաճելի բան: Թէկուզ թէ անոր հասնելու համար շաբաթներ կամ նոյնիսկ ամիսներ պահանջուին ձեզմէ: Հաւատացէ՛ք, հաճելի սպասումը այդ ամբողջ ընթացքին ձեզի պիտի օգնէ վայելելու իւրաքանչիւր օրը:

Ձեր Ծանուցումները Կատախեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՄԳՀԿ
Արեւմտեան Ամերիկայի Շրջան
ԿԱՅԾ
Երիտասարդական Միութեան նախաձեռնութեամբ՝
Դասախօսութեան Երեկոյ
«Ազատ Անկախ Հայ - Ազատ Անկախ Հայաստան»
Կը Չեկուցէ՛
Յարուք Տէր Դաւիթեան
Հինգշաբթի 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2016, Երեկոյեան ժամը 8:00-ին
ՀԿԲՄ Կարօ Սողանալեան Մրահէն ներս:
1060 N. Allen Avenue
Pasadena, CA 91104
Հիւրասիրոյթիւն
Մուտքը Ազատ

ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

Խոյ **Մարտ 21-Ապրիլ 19**
 Երբեմն կը փորձես ամեն գնով յստակացնել կեանքիդ խորհրդաւոր հարցերը, սակայն չես յաջողիր, որովհետեւ արտայայտուելու կարողութիւնդ սահմանափակ է: Կողակիցիդ կարողութիւն ունենալը կը հանգչեցնէ քեզ:
 Բախտաւոր թիւերդ են: 4,13,17,25,30

ՑՈՒԼ **Ապրիլ 20-Մայիս 20**
 Երբէք մի գարնանար երբ ընտանիքիդ անդամներէն մէկը տարբեր միջոցներու դիմէ գաղտնիքներ եւ ճշմարտութիւններ դուրս բերելու համար: Շաբաթավերջը կեանքիդ յատկանշական օրերէն մէկը պիտի ըլլայ: Անիմաստ խօսքերու մի հաւատար: Բախտաւոր թիւերդ են: 1,12,18,24,26

ԵՐԿՈՒՌՆԵՐ **Մայիս 21-Յունիս 20**
 Յաջողութիւններդ մասամբ մը կը պարտիս մարդոց, որոնք քու գործերդ կը կատարեն հաւատարմութեամբ: Շնորհակալ եղիր քեզի տրուած առիթներուն համար: Ձաւակներովդ եւ անոնց իրագործումներով հպարտացիր:
 Բախտաւոր թիւերդ են: 3,11,25,30,33

ԽԵՑԳԵՏԻՆ **Յունիս 21-Յուլիս 22**
 Յուսալքումի մը ժամանակ, բնաւ փոփոխութիւններ մի կատարեր գործելապէրայիդ եւ ապրելակերպիդ մէջ, այլ հաստատ կեցիք եւ շարունակէ ընել այն բոլոր բաները որ կ'ընէիր: Զնայալով եղիր բոլոր օրէնքներուն եւ կանոններուն:
 Բախտաւոր թիւերդ են: 8,19,20,27,34

ԱՌԻՒԾ **Յուլիս 23-Օգոստոս 22**
 Այս շաբաթ քիչ մը շուարունով պիտի մօտենաս գործիդ, որովհետեւ դուն քեզ անսովոր եւ անիմաստ կացութեան մէջ պիտի զգաս: Վճռակամ կեցուածքդ մի փոխեր եւ մնացիր քեզի ճշդուած գործի մէջ:
 Բախտաւոր թիւերդ են: 5,17,21,30,31

ԿՈՅՍ **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
 Շատ ազդեցիկ եւ հրապուրիչ վարմունք ունեցող անհատ մըն ես եւ կը սիրուիս շրջանակի մէջ: Գալիք օրերուն շատ հանգչելու ես եւ առողջութեանդ լաւ հոգ տանելու ես: Գործի փոփոխութիւն մը ակելի պիտի սփոփէ քեզ:
 Բախտաւոր թիւերդ են: 7,15,23,26,29

ԿՇԻՈՔ **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
 Իւրաքանչիւր մոր օր մոր բաներ պիտի բերէ ընտանեկան կեանքդ: Գնահատուած փորձառութիւններդ օգտագործէ գործիդ դժուարութիւններուն մէջ: Շրջանիդ մէջ գտնուող կարօտեալներուն նկատմամբ ակելի խղճամիտ ըլլալու ես:
 Բախտաւոր թիւերդ են: 4,13,26,31,34

ԿԱՐԻԾ **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
 Ինքզինքդ անարժէք անձ մը կարծելուդ՝ հեռու կը մնաս ընկերային հաւաքներէ: Ինքնավստահութիւնդ ակելցնելու եւ արժէքներդ լաւ գիտնալու ես որպէսզի ընդունիս դուն քեզ: Ձիրար հարուածող կացութիւններէ հեռու մնալու ես:
 Բախտաւոր թիւերդ են: 9,17,24,32,33

ԱՂԵՂՆԱՒՈՐ **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
 Մեծ ուրախութեան մէջ պիտի ըլլաս եւ անհամբերութեամբ պիտի սպասես գալիք օրերերուն: Բարեկամ մը խորհուրդ պիտի հարցնէ քեզի շատ զգայուն հարցի մը նկատմամբ՝ արդարութեամբ խորհրդակցիր հետը:
 Բախտաւոր թիւերդ են: 11,23,27,30,34

ԱՅԾԵՂՋԻՐ **Դեկտեմբեր 22-Յունուար 19**
 Հոգեկան վերքերդ բացող վէճերէն հեռու մնալու ես քու ընտանիքիդ լաւութեանը համար: Խօսքերդ չափաւորէ որ փորձանքի չմատուցիս: Նամակատան միջոցաւ մեծ ծրար մը պիտի ստանաս եւ բաժնեկցիս զայն ընկերներուդ հետ:
 Բախտաւոր թիւերդ են: 7,13,24,26,33

ԾՈՎԱՆՈՅԸ **Յունուար 20-Փետրուար 18**
 Շատ զօրաւոր ըմբռնում ունիս եւ սիրելով զոհաբերել գիտես: Յաջողութիւն ունենալու համար պայման է որ ձայնողութիւններու հանդիպիս՝ մի յուսահատիր: Ճամբորդութիւն մը պիտի սփոփէ եւ քեզ եւ մտատանջութիւններդ փարատէ:
 Բախտաւոր թիւերդ են: 5,14,17,23,24

ՉՈՒԿ **Փետրուար 19-Մարտ 20**
 Ըմբոստ միտումներդ քեզ յաճախ անբաղձելի հետեւանքներու կ'առաջնորդեն: Զաստատ մնացիր սկզբունքներուդ վրայ, ուրիշից հրահանգից տակ չ'ըլլալու համար: Օնողքիդ պէտքերը լաւապէս հոգա՛ որովհետեւ անոնք քեզի պէտք ունին:
 Բախտաւոր թիւերդ են: 10,18,27,28,35

ԵՐԵՒԱՆ ԵՒ ... ՊԵՅՐՈՒԹ

Շարունակուած էջ 7-էն

այդ ուղեգրի մէջ, այսպէս կոչուած շեհապականութեան դէմ գոյացաւ «Երբեակ դաշինքը», որ լուրջ յաջողութիւններ ունեցաւ 1968ին կայացած խորհրդարանական ընտրութիւններուն ժամանակ եւ տիրացաւ պատգամաւորական բազմաթիւ աթոռներու: Այս պայմաններու տակ, 1970ի նախագահական ընտրութիւնները շատ թէժ էին, բայց՝ ամբողջութեամբ երկրի սահմանադրական սկզբունքներուն համապատասխան: Ընդդիմադիր «Երբեակ դաշինքի» թեկնածուն ստացաւ խորհրդարանի 99 պատգամաւորներէն 50ին ձայները, իշխանամէտ շեհապական թեկնածուն՝ 49 քուէ: Լիբանանի հանրապետութեան նախագահը ընտրուեցաւ մէկ ձայնի տարբերութեամբ:

1977ին Խարաջէլը արշաւեց հարաւային Լիբանան՝ այնտեղ ճնշելու համար պաղեստինցի մարտիկներու կամ ֆրոնտիստներու եւ անոնց լիբանանցի համախոհներուն գործունէութիւնը: 1982ին՝ երկրորդ, աւելի լայնածաւալ արշաւանքով մը Խարաջէլացի զօրքերը պաշարեցին ու շաբաթներով ռմբակոծեցին Պէյրութը: Յետոյ, խախտելով հրադադարի պայմանագիրը, անոնք նուաճեցին Պէյրութը, երբ՝ ըստ նոյն պայմանագրի, անկէ արդէն հեռացած էին քաղաքը պաշտպանողներուն մեծ մասը: Պէյրութը դարձաւ Խարաջէլեան զբաղման ենթակալ առաջին արաբական մայրաքաղաքը: Բայց, նոյն Պէյրութին մէջ շուտով յառաջ եկաւ դիմադրական ճակատ մը, որու զինուած գործողութիւնները Խարաջէլացի զինուորներուն դէմ կարեւոր դեր խաղացին Պէյրութէն շուտով հեռանալու Խարաջէլեան որոշման մէջ: Խարաջէլի դէմ հարաւային Լիբանանի մէջ զինուած դիմադրութիւնը շարունակուեցաւ մինչեւ 2000 թուականը եւ ի վերջոյ Խարաջէլին պարտադրեց, որ երկրէն հեռանալու միակողմանի որոշում կայացնէ՝ առանց Լիբանանի կառավարութենէն նուազագոյն զիջում կարենալ կորզելու: Արաբ-Խարաջէլեան պատերազմներու պատմութեան մէջ, ասիկա առանց որեւէ քաղաքական զիջման, զբաւուած հող ազատագրելու միակ դէպքն է, որմով հպարտ են բոլոր լիբանանցիները: 1992ին տեղի ունեցած՝ քաղաքացիական պատերազմէն ետք առաջին խորհրդարանական ընտրութիւններուն ժամանակ եւս, երկրի վարչապետին գլխաւորած թեկնածուներու ցուցակը Պէյրութի մէջ շատ ծանր պարտութիւն կրեց: Պատգամաւոր ընտրուեցան ընդդիմադիր ցուցակէն բազմաթիւ թեկնածուներ:

Համարեա՛ նոյնպիսի վախճան ունեցան 2000ի խորհրդարանական

ընտրութիւնները: Ռաֆիք ալ-Հարիրին (արեւելահայ արտասանութեամբ՝ Ռաֆիկ ալ-Հարիրի) վարչապետ դարձած էր 1992ի խորհրդարանական ընտրութիւններէն ետք, բայց երբ 1998ին հանրապետութեան նախագահ ընտրուեցաւ էմիլ Լահուտը (արեւելահայ արտասանութեամբ՝ էմիլ Լահուդ), Հարիրի մերժեց շարունակել պաշտօնավարել, որովհետեւ նորընտիր նախագահին հետ լուրջ տարակարծութիւններ ունէր երկրի զարգացման ռազմավարութեան շուրջ: Հարիրի անցաւ ընդդիմութեան շարքերը եւ 2000ի ընտրութիւններուն մասնակցեցաւ իբրեւ ընդդիմադիր: Երբ Հարիրի եւ իր հետեւորդները այդ ընտրութիւններուն շունդակից յաղթանակ տարին, Նախագահ Լահուտ հարկադրուած եղաւ վերստին վարչապետ նշանակել Հարիրին եւ ընդունիլ անոր ծրագրերը:

Իբրեւ վերջին կէտ նշեմ նաեւ թէ Լիբանանի մէջ սահմանադրական խորհուրդ կամ դատարան ստեղծուած է 1990 թուականի սահմանադրական փոփոխութիւններու ծիրէն ներս: Բազմաթիւ այլ իրաւասութիւններու կողքին, այս խորհուրդը կը քննէ նաեւ խորհրդարանական ընտրութիւններու ժամանակ պարտուած թեկնածուներուն ներկայացուցած հայցերը: Ի հարկէ, բազմաթիւ պարտուած թեկնածուներ փորձած են օգտուիլ այս իրաւունքէն եւ պահանջած են բեկանել իրենց ընտրաշրջանի արդիւնքները: Բնականաբար, ոչ բոլոր հայցերն այս ուղղութեամբ բաւարարուած են խորհուրդին կողմէ, բայց քիչ չեն նաեւ այն պարագաները, երբ խորհուրդը քննած է բողոքը եւ բաւարարած բողոքարկող թեկնածուին պահանջը՝ բեկանելով ընտրութեան պաշտօնական արդիւնքները եւ այդ ընտրաշրջանին մէջ նշանակելով նոր ընտրութիւններ:

Ի հարկէ, այս դրուագները Լիբանանի պատմութեան ամբողջութիւնը չեն ներկայացնում: Վերելը մատնանշեցի թէ փաստերու այս փունջն ալ ընտրովի է՝ յար եւ նման Պէյրութ ըսելով միայն քաղաքացիական պատերազմ հասկնալու ընտրանքին: Այս յօդուածս գրուած է առաջին հերթին հայրենաբնակ ազգակիցներուս համար: Դիտմամբ խուսափեցա՛ք բաղաւորութիւններ կատարելէ Հայաստանի մերօրեայ իրականութեան հետ: Անոնց, որոնց հասանելի պիտի ըլլայ այս գրութիւնս, վստահ եմ, որ իրենցմէ իւրաքանչիւրը, եթէ ցանկաց, կրնայ համեմատել զոչ իրավիճակները եւ ըստ այնմ կատարել իր ուրոյն եզրակացութիւնը, թէ երբեւիցէ կ'արժէ՞, թէ՛ ոչ, «Պէյրութ» սարքել Երեւանը, եւ թէ իւրաքանչիւր պարագային ի՞նչ կրնայ խորհրդանշել «Պէյրութ» տեղանունը:

ՎԵՐ. ՎԱԶԷ ԷՔՍԷՔԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

օրէնքները փոքրամասութիւնները ոչնչացնելու կը ծառայէին միայն: Օրէնքին տէրը Թուրքն էր: Ջոհը՝ հայեր, յոյներ, ասորիներ եւ այլ փոքրամասութիւններ: Այսինքն հողին իրա՛ւ տէրերը:

Տէրեր, որոնք այսօր ոչ թէ «Արմատներու Մրմունջով» կը ներկայանան աշխարհի, այլ կը ներկայանան որպէս պահանջատէր: Վեր. Վաչէ էքմէքճեան իր այս երկով՝ շնորհաւորելի, մեզ խորհր-

դածութիւններու մղող գիրք մը հրատարակած է, հայ մամուլն ու արխիւային բազմաթիւ նիւթեր գիշեր ու տիւ կարդալով: Նիւթը, հեղինակը եւս համեստօրէն ըսած է, որ սպառած չէ: Շնորհալի է իր երկու լեզուներով հրատարակուած ըլլալուն համար նաեւ: Մայրենիով բաժինը կրնար աւելի փայլուն ըլլալ: Հաստատուածներու թուական տուեալները ճիշդ են ի պատիւ տքնաշան այս գործի հեղինակին:

ՅԱՂԹԵՑԻՆՔ, ԹԵ՞ ՊԱՐՏՈՒԵՑԱԼՔ

Շարունակուած էջ 8-էն

արդարութիւն եւ հաւասարութիւն պահանջելով: Մամոնայապաշտ այս սքեմաւորները, այս ստրկացած հոգիները ոչինչով կ'արդարացնեն իրենց գոյութիւնը: Իրենց հանգիստն ու պաշտօնները ապահով պահելու համար ծախած են մարդկային արժանիքներու բոլոր սկզբունքները, հոգեւոր ազգատուութեան մէջ տուալտելով ստորնաբարձ կը պահեն իրենց գոյութիւնը: Ի տես ժողովրդային պոռթկումին, ո'չ մէկ կերպով փորձեցին միջնորդի դեր կատարել խնդրին հանգալուծման համար: Իսկ այդ քաջարի քահանան, Տէր Արմէն Մեկրտչեանը, որ Հոլանտայի մէջ իր ժողովուրդի կողքին կանգնած բողոքեց եղած անարդարութեան դէմ, պատժուեցաւ Ֆրանսայի առաջնորդ Վահան Արքեպիսկոպոսին կողմէ, Գարեգին Բ. Կաթողիկոսի հրահանգով: Այլեւս ընթերցողին կը թողու՞մ եզրայանգումները:

Պարտուեցանք՝ որովհետեւ քսանհինգ տարիներու սին խոստումները թերահաւատ դարձուցին մեր ժողովուրդը: Հաւատք եւ յոյս ներշնչող գործնական ո'չ մէկ քայլ առնուած է ընկերային արդարութիւն հաստատելու համար: Անպատժելիութեան մթնոթորտին մէջ տակաւին կը շարունակուին հանապազօրեայ սպանութիւնները: Կը շարունակուին կաշառակերութիւնը, անհանդուրժողութիւնը եւ քրեանախնդրութիւնը:

Պարտուեցանք՝ որովհետեւ քսանհինգ տարիներու ընթացքին չկարողացանք ստեղծել քաղաքա-

կան մտածողութեան առողջ եւ շինիչ քննարկում: Դժբախտաբար, Հայաստանի մէջ պետութիւնն ու իշխանութիւնը միաձուլուած են, եւ այդ պատճառով՝ որեւէ հակա-իշխանական արարք կամ ժողովրդային շարժում շատ դիւրութեամբ կ'որակուի որպէս պետականութեան դէմ հարուած:

Պարտուեցանք՝ որովհետեւ հարցերը չեն լուծուած եւ շատ ալ հեռու են լուծման յանգելու: Պայթուցիկ այս վիճակը կրնայ յանկարծ բռնկիլ այնպիսի պահուն երբ մեր ամբողջ երկիրը, «երազային Հայաստանը», կրնայ դիմագրաւել արտաքին նոր սպառնալիքներ, որոնց ոտնաձայները կը լսենք: Անհրաժեշտ է խորհրդային կարգերէն ժառանգուած՝ երկրին տնտեսութիւնը թաւանող մենաշնորհեալ դասակարգին խորտակումը: Երկրի տնտեսութիւնը ասպատակող այս սակաւապետերը (oligarch) պետութեան ձեռքէն խլած են ամէն միջոց որ կը միտի երկրէն ներս ստեղծել տնտեսական, հասարակական, իրաւաբանական եւ քաղաքական առողջ մթնոլորտ մը:

Պարտուեցանք՝ որովհետեւ ասպակայունացած այս մթնոլորտին մէջ ժողովրդային յուսահատութեան դրսեւորումը պիտի տեսնենք գանգուածային նոր արտագաղթով: Հասած է պահը, որ երկիրը վերադարձնենք իր հարազատ գաւակներուն՝ իր ժողովուրդին, եւ վերականգնենք ժողովրդավարական բոլոր ազնիւ ու արդար սկզբունքները, յանուն մեր տառապեալ ժողովուրդին, յանուն մեր նահատակներուն:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

Շարունակուած էջ 15-էն

Entertainment Awards 2016 մրցանակաբաշխութիւնն է, որ տեղի կ'ունենայ Նոյեմբեր 6 -ին հանրահռչակ Microsoft Theater -ի մէջ: Տարուան գլխաւոր մշակութային միջոցառման ընթացքին մրցանակներ կը յանձնուին Հայաստանի ու սփիւռքի մէջ ապրող հայ արուեստագէտներուն՝ երաժշտութեան, շարժապատկերի, պատկերասփիւռի, նորաձեւութեան եւ այլ ոլորտներու մէջ: Միջոցառումը պիտի ընդգրկէ ոչ միայն Հայաստանի, այլեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու, ՌԴ-ի, Եւրոպայի եւ Քանադայի մէջ ապրող ազգութեամբ հայ մշակութային գործիչներու ու շուքերի գնեսեան ներկայացուցիչներու տարուան լաւագոյն աշխատանքները:

Microsoft Theater -ի հեղինակաւոր դահլիճէն ներս կը սպասուի չտեսնուած շոու ծրագիր՝ ձայնային ու լուսային նորագոյն տպաւորութիւններով: Այս դահլիճէն ներս տեղի կ'ունենան այնպիսի հեղինակաւոր միջոցառումներ ու մրցանակաբաշխութիւններ, ինչպիսին են «American Music Awards»-ը, «Bet Awards»-ը, «Emmy Awards»-ը, «People's Choice Awards»-ը, «2010 & 2011 MTB Video Music Awards», «2014 & 2015 MTV Video Music Awards», «MTV Movie Awards» մրցանակաբաշխութիւնները, ինչպէս նաեւ «The American Idol Final Shows» նախագիծը եւ այլն:

Իր մաշտաբներով նախագէտ չունեցող այս մրցանակաբաշխութեան դահլիճէն պիտի հետեւին 7100 հանդիսատես եւ 10 միլիոն պատկերասփիւռի դիտող ամբողջ

աշխարհի տարածքին:

Մրցանակաբաշխութեան արձանիկներն արդէն պատրաստութեան հանգրուանին մէջ են: Ատոնց հեղինակն աշխարհահռչակ ձեւագծող Մայքըլ Արամն է, որուն գործերն արդէն տարիներ շարունակ կը շոյեն արուեստասէր հանրութեան ճաշակը:

PanArmenian TV -ի տնօրէն Դաւիթ Աւետիսեանին խօսքերով Pan Armenian Entertainment Awards -ը իւրատեսակ հարթակ է, որ Հայաստանն ու սփիւռքը կամրջելու ուրոյն առաքելութիւն ունի: Այն նման ձեւի այլ միջոցառումներէ պէտք է տարբերի իր մաշտաբներով, կատարուած նախապատրաստական հակայրահան աշխատանքով եւ աշխարհահռչակ բազմաթիւ կատարողներու ներկայութեամբ: Դաւիթ Աւետիսեանը վստահ է, որ «Global Arts International»-ի հետ համագործակցութեան շրջանակներու մէջ յառաջիկային եւս ըլլալու են բարձր որակի համերգներ, ներկայացումներ ու շոու ծրագիրներ, որոնք տարուէ տարի պիտի ընդլայնեն իրենց աշխարհագրութիւնը:

Global Arts International -ի հիմնադիր-նախագահ Կարպիս Թիթիգեան կը նշէ, որ շատ կարեւոր է Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ ցոյց տալ հայ ազգի տաղանդներու տարուան լաւագոյն աշխատանքները, ինչպէս նաեւ հայաստանեան լսարանին ծանօթացնել հայրենիքէն դուրս ապրող ու աշխատող հայ հանրային դէմքերու, արուեստագէտներուն աշխատանքները, որոնք գուցէ շատերու համար այնպէս են:

ԱՐԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՓՈՒԻՉ ԱՊՏԱԿ

Շարունակուած էջ 8-էն

Աւելորդ է պաշտօնատար անձանց անունների եւ թուերի թուարկումը: Ներկայիս համակարգը ծնունդ է տուել «գործարարների» այնպիսի մի սերունդի, որ գործարար Ամերիկայի նախանձն է շարժում: Վերջիններիս մօտ կէս կատակ կէս լուրջ շրջանառում է այն հարցը, թէ Հայաստանում ինչ արժեքն այն «գրամակուտակիչ» աթոռները, որ կարճ ժամանակամիջոցում հակայական շահ են ապահովում: Նախանձելիները ում որ չեն գտնի աշխարհի ոչ մի բորսայում: Այնպէս որ, եկէք Սրբութեանց Սրբոց համարուող հայրենի շահերը դիտարկելիս իրական արժէքները տարբերակենք կեղծ արժէքներէր:

«Սասնայ ծռերի» սկզբունքօրէն անընդունելի գործողութիւնը համարենք իշխող վարչակարգին ուղղուած ճարահատեալ, բայց բարենորոգիչ ապտակ՝ ճիշդ եւ արագ հետեւութիւններ անելու համար: Ակնյայտ է, որ բարեփոխումներ չեն կարող լինել, եթէ կատարեալ աշխատանքը չի գուճակցուում սեփական խմբակային շահերի գոհաբերումով:

Վերջին հաշուով հայրենի վարչախումբը կանգնում է մի երկրնտրանքի առջեւ, կամ յանձնուել, այսինքն՝ յանձնել իշխանութիւնը ժողովրդի կամ քր արտայայտող եւ նրա վստահութիւնը վայելող մի այլ ուժի, կամ ինքնագոհաբերումով բարեփոխումներ իրականացում:

Դա նշանակում է յեղափոխական բարեփոխում սեփական ու խմբակային շահերի գոհաբերումով: Այստեղ անմիջապէս հարց է առաջանում, արդեօք ներկայիս իշխանութիւնը իր այս վարչակարգով ունի այդ կամքը եւ կարո-

ԵՐԿՈՒ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ

Շարունակուած էջ 15-էն

կահայ մեծանուն բարերար Անուշաւան Աբրահամեանին:

Երկրորդ ճարտարապետական տարրալուծարանը բացուեցաւ Մարալիկի Պետական Արհեստագործական Ուսումնարանէն ներս, որով Շիրակի մարզի պատանիներուն համար ստեղծուեցաւ բացառիկ հնարաւորութիւն՝ զբաղուիլ տեղեկատուական արուեստագիտութիւններու ուսումնասիրութեամբ եւ հմտանալ ճարտարապետական կրթութեան մէջ: Արդէն Սեպտեմբեր ամիսին սկսեալ կը մեկնարկեն առաջին դասընթացքները՝ նախատեսուած վեց տարբեր դասաժամերով: Տեղին է նշել, նաեւ որ դասընթացքները կիրականացուին անվճար հիմունքներով, ինչ որ հնարաւորութիւն կու տայ ուսանողներու աւելի լայն շրջանակ ընդգրկել տարրալուծարանի աշխատանքներուն մէջ: Տարրալուծարանէն ներս ծաւալուող յետագայ դասընթացքները շարունակական կերպով կը խրախուսուին

դութիւնը: Խիստ տարակուսելի է միայն յուսանք, սուրբ ամենափրկչին սպասող հաւատացեալի նման, չմնանք հրաշքներին սպասող միամիտ ու ակտիւութիւնը մարած քաղաքացիներ:

Քաղաքական բաժնում զնահատելով «Սասնա ծռերի» գործողութիւնը, որպէս անսովոր ակտ մատնանշենք այն փաստը, որ նրանք յարձակուելով ապտակեցին, իսկ բանականութեան ձայնին ունկնդրելով յանձնուեցին: Նրանով մի անգնահատելի նուէր մատուցեցին երկրի նախագահ Սերժ Սարգսեանին, ամրապնդելով նրա դիրքերը Ղարաբաղեան հարցի կարգաւորման առաջիկայ բանակցութիւններում: Երկրի ներքին իրավիճակի մասով նա սեղանին է դնում երկու կարեւոր հանգամանք, առաջինը՝ բացառուում է հողերի զիջումը, մատնացոյց անելով զինուած խմբի գործողութիւնը եւ ժողովրդի կողմից նրանց պաշտպանութիւնը: Երկրորդ՝ Նա ամուր դիրքերից է հանդէս գալիս, մատնացոյց անելով թէ զինուած տղաները ինչպէս յանձնուեցին, վստահեցնելով, որ իրավիճակին լիովին տիրապետում է: Մի խօսքով նպաստաւոր դիրքերից բանակցելու բացառիկ հնարաւորութիւն ընձեռնուեց:

Յուսանք «Արքայական» եսամոլութիւնը եւ վերջերս նրա հետ դաշինք կնքած՝ աւանդական դաշնակիցը իր եսակիցներուն հեղեմոնիզմով, ի չիք չեն դարձնի ձեռք բերումներ: Երկիրը տանելով աւելի բռնատիրական վարչակարգի ճիւղանները: Քանզի ռեպրեսաններով եւ հայածանքներով, այսինքն միայն պատժելով համակարգ չես փոխի, ընդամէնը կարճաժամկէտ իշխանութիւնը կերկարացնէս: Հարկաւոր է ինքնագոհաբերմամբ իշխանութեան հաստատում:

Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան կողմէ, քանզի այս բացառիկ նախաձեռնութիւնը կը նկատուի, որպէս ուղեղի եւ մտային ուժի ճիշդ համադրման գերազանց օրինակ: Մեծարգոյ բարերար Անուշաւան Աբրահամեանի այս նախաձեռնութիւնն աննախադէպ յառաջընթաց է հանրային կրթութեան համար, որովհետեւ այն կը հանդիսանայ իր տեսակին մէջ առաջին ծրագիրը, զոր հասանելի կը դարձնէ ճարտարապետական ոլորտի ուսումնասիրութիւնները, նաեւ միջին մասնագիտական կրթական հաստատութիւններուն:

ԱԱԿՀ-ն կը շարունակէ յառաջընթանալ՝ հաւատարմով եւ իրագործելով այսպիսի ծրագիրներ, որոնք Հայաստանի երիտասարդ սերունդներուն համար աւելի կայուն եւ խոստումնային ապագայ կը ստեղծեն:

Լրացուցիչ տեղեկութեան համար կրնաք այցելել www.aafund.org կայքէջը կամ ԱԱԿՀ-ի հետ կապ հաստատել հետեւեալ info@aafund.org հասցեով:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԸՆԿ. ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկ. Արաքսիին եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեանին:

ՌԻՕ-2016.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՐԴԻՆԵԱՆԸ 7-ՐԴՆ ԷՐ

Ռիոյի Օլիմպիական խաղերի սպորտային մարմնամարզութեան մրցաշարում Հայաստանի ներկայացուցիչ Յարութիւն Մերդինեանը հանդէս եկաւ նժուգի վարժութեան եզրափակիչում եւ ցոյց տուեց 14.933 արդիւնք, որը թոյլ տուեց գրաւել միայն 7-րդ տեղը:



Նժուգի վարժութեան որակաւորման փուլում Եւրոպայի գործող ախոյեան, աշխարհի 2015թ. առաջնութեան պրոնզէ մետալակիր Մերդինեանը հաւաքել էր 15.583 միաւոր եւ զբաղեցրել չորրորդ տեղը:

Ախոյեանի տիտղոսը 15.966 արդիւնքով նուաճեց բրիտանացի Մաքս Ուիթլիլը, որը նուաճել էր նաեւ ազատ վարժութիւնների ոսկէ մետալը: Բրիտանացի Լուիս Սմիթը 15.833 արդիւնքով գրաւեց երկրորդ տեղը: Պրոնզէ մետալակիր դարձաւ ամերիկացի Ալեքսանդր Նադուրը՝ 15.700:

ՌԻՍԵՅՆ ԲՈԼԹԸ ՈՍԿԷ ՄԵՏԱԼ ՆՈՒԱԾԵՑ 100 ՄԵՏՐՈՒՄ



Ռիո դէ Ժանէյրոյում շարունակուող ամառային Օլիմպիական խաղերի 100 մետր վազքի յաղթողի տիտղոսը նուաճեց աշխարհի 11-ակի ախոյեան Ուսեյն Բոլթը, որը դարձաւ 7-ակի օլիմպիական ախոյեան: 100 եւ 200 մետր վազքի աշխարհի ռեկորդակիրը գրանցեց 9.81 վայրկեան արդիւնք: Արծաթէ մետալակիր դարձաւ ամերիկացի Ջաստին Գեթլինը, իսկ պրոնզէ մետալը բաժին հասաւ Քանադացի ներկայացուցիչ Անդրէ Դէ Գրասին:

Յիշեցնենք, որ Չամայկացի արագավազորդը 100 մետրի աշխարհի ռեկորդը սահմանել է 2009-ին՝ գրանցելով 9.58 վայրկեան արդիւնք:

ՄԱՅՔԸ ՖԵԼՓՍԸ ԿՐԿՆԵԼ Է 2000 ՏԱՐՈՒԱ ՌԵԿՈՐԴ

Ամերիկացի լեգենդար լողորդ Մայքլ Ֆելփսը, 3 ոսկէ մետալ նուաճելով Ռիո Տէ Ժանէյրոյում անցկացուող Օլիմպիական խաղերում, կրկին էլ պատմական ռեկորդ:



31-ամեայ մարզիկը Ռիո-2016-ում նուաճել է 12-րդ անհատական ոսկէ մեդալն Օլիմպիական խաղերում՝ կրկին լող վազորդ Լեոնիդաս Հոդոսցու ռեկորդը: Հին յուն օլիմպիականը 12-ակի օլիմպիական ախոյեան էր դարձել մ.թ.ա. 152 թուականին:

Աւելի վաղ Մայքլ Ֆելփսը գերազանցել էր 96 տարուայ ռեկորդ՝ դառնալով պատմութեան ամենատարեց օլիմպիական ախոյեանը լողում (31 տարեկանում): Այդ ցուցանիշով նախորդ ռեկորդը պատկանում էր 1920 թուականի Օլիմպիական խաղերի հերոսներից Դիւկ Կախանամոկին, որը լողի օլիմպիական ոսկէ մետալ էր նուաճել 30 տարեկան դառնալուց օրեր անց:

Յիշեցնենք, որ Մայքլ Ֆելփսը պատմութեան միակ մարզիկն է, որը 21-ակի օլիմպիական ախոյեան է: Ռիո-2016-ն ամերիկացու վերջին Օլիմպիական խաղերն է: Նա կարիերան որոշել էր աւարտել Լոնտոն-2012-ից յետոյ, սակայն 2014-ին վերադարձաւ:

ՀԵՆՐԻԽ ՄԻՍԻԹԱՐԵԱՆ. «ՄԵԾ ՊԱՏԻՒ Է ԼԻՆԵԼ ՊՐԵՄՅԵՐ ԼԻԳԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆ»

Ֆուտպոլի Անգլիայի Պրեմիեր լիգայում նորամուտը նշած Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միսիթարեանն անդրադարձել է առաջին տուրում «Մանչեսթեր Եւնայթեդի» տարած արտազնայ յաղթանակին:



«Գերազանց թիմային յաղթանակ: Ինձ համար մեծ պատիւ է լինել Պրեմիեր լիգայում խաղացող առաջին հայաստանցին», - իր ֆէյսպուքեան էջում գրել է Հենրիխ Միսիթարեանը:

Հայ ֆուտպոլիստը «Բորնմութի» դէմ խաղում 75-րդ րոպէին փոխարինեց սպանացի կիսապաշտպան Խուան Մատային:

ԱՐՄԵՆ ԶՈՒԼՖԱԼԱԿԵԱՆԸ ԶՐԿՈՒԵՑ ՆԱԵՒ ՊՐՈՆՁԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԻՑ

Ռիոյի Օլիմպիական խաղերի յունահռոմէական ըմբշամարտի 75 կգ քաշայինների պայքարում Լոնտոնի Օլիմպիական խաղերի փոխախոյեան, աշխարհի ախոյեան, 29-ամեայ Արսէն Զուլֆալակեանը մնաց առանց մետալի:



Նախնական փուլում հաջ մեքիշը պարտուեց Պուլկարիայի ներկայացուցիչ, 24-ամեայ Դանիէլ Ալեքսանդրովին, որը երկրորդ գոտեմարտում 0:4 հաշուով պայքարը տանուլ տուեց աշխարհի ու Եւրոպայի ախոյեան, հունգարացի Պետեր Բաշիին:

Կիսաեզրափակիչ է հասել 2012թ. Լոնտոնի Օլիմպիական խաղերի եզրափակիչում Արսէն Զուլֆալակեանին յաղթած, ռուսաստանցի Ռոման Վլասովը:

ԱՐԱՍ ԱՒԱԳԵԱՆԸ ՊԱՐՏՈՒԵՑ ԱՇԽԱՐՀԻ ՈՒ ԵՐՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆԻՆ

Ռիոյի Օլիմպիական խաղերի բռնցքամարտի մրցաշարում Հայաստանի ներկայացուցիչ Արամ Աւագեանը հանդէս եկաւ 56 կգ քաշային կարգի 1/8 եզրափակիչում: Մրցակիցը իռլանդացի Մայքլ Քոնլանն էր, որն առաջին շրջանում ազատ էր:



Իռլանդացի բռնցքամարտիկը երեք ռաունդներում էլ առաւելութիւն ունէր եւ յաղթեց 3:0 հաշուով:

24-ամեայ Քոնլանը 2012թ. Լոնտոնի Օլիմպիական խաղերի պրոնզէ մետալակիր է 52 կգ քաշային կարգում, 2015թ. աշխարհի ու Եւրոպայի ախոյեանն է 56 կգ քաշային կարգում:

Արամ Աւագեանն առաջին շրջանում 2:1 հաշուով պարտութեան էր մատնել 20-ամեայ ճապոնացի Արաշի Մորիսակային:

ԿԻՐԻԼ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ՝ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Ռուսաստանի հաւաքականի կազմում երրորդ հայ մարզիկը դարձաւ Ռիոյի Օլիմպիական խաղերի մետալակիր: Հրաձգութեան մրցաշարում հրացանից, պառկած, 50 մետրից մրցաձեւում պրոնզէ մետալակիր է դարձել Կիրիլ Գրիգորեանը՝ 187.3:



24-ամեայ պետերբուրգցի մարզիկի մարզիչը հայրն է՝ միջազգային կարգի սպորտի վարպետ Յակոբ Գրիգորեանը:

Ախոյեան է դարձել գերմանացի Հենրի Եոնգհենելը, որը ցոյց է տուել 209.5 արդիւնք: Արծաթէ մետալը նուաճել է հարաւորեացի Կիմ Եոն Հյունը:

Յիշեցնենք, որ Ռիոյի Օլիմպիական խաղերում Ռուսաստանի համար ոսկէ մետալ է նուաճել սուսերամարտիկ Յանա Եգորեանը եւ արծաթէ մետալ՝ սպորտային մարմնամարզութեան հաւաքականի անդամ Սեդա Թուրխալեանը: